# Քրիստոնյա Հայաստան

2009, ՕԳՈՍՏՈՍ Ա, ԹԻՎ 15 (299)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ


## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

**(Երեւան, 30 հուլիսի, 2009 թ.)**




*Մեծարգո Նախագահ,*

*Հարգարժան նախարար,*

*Սիրելի Հայոց բանակի հրամանատարական կազմի ներկայացուցիչներ, շրջանավարտներ եւ բարեպաշտ ժողովուրդ հայոց,*

*Ուրախ ենք ողջունելու ձեզ Պաշտպանության նախարարության ռազմաուսումնական հաստատությունների ավարտական հանդիսության այս օրհնյալ օրը: Ավարտական վկայականների հանձնման նշանակալի առիթով Հայրապետական սիրով Մեր բարեմաղթանքներն ու շնորհավորանքներն ենք բերում ձեզ՝ սիրելի շրջանավարտ սաներիդ Վազգեն Սարգսյանի անվան Ռազմական ինստիտուտի, որի հիմնադրման 15-ամյակն է նաեւ տոնախմբվում այսօր, ինչպես նաեւ Արմենակ Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտի եւ Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի ռազմաբժշկական ֆակուլտետի: Մեր գնահատանքն ենք բերում բարեջան դասախոսներին եւ տեսչական մարմիններին, որ տարիներ շարունակ իրենց ջանադիր աշխատանքով եւ բեղուն գործունեությամբ կրթում եւ դաստիարակում են արժանավոր սպաներ Հայոց բանակի, որպեսզի մեր բանակը միշտ լինի մարտունակ ու անպարտելի եւ զորավոր լինի բազուկը հայ զինվորի:*

*Մեր պատմության ընթացքում Հայրենիքի պաշտպանների ուխտը՝ հաստատված Ամենազոր Աստծո եւ ժողովրդի առջեւ, ազգային կյանքում դրսեւորվել է անձնվիրության ու անձնազոհության հիանալի օրինակներով, դժվարությունների առջեւ երբեք չընկճվելու եւ նվիրյալ ծառայությունը հաղթանակներով պսակելու հերոսական առաքելությամբ: Այս քաջարի ոգին, նվիրումն ու հավատարմությունը առ Հայրենին միշտ կենդանի է հայոց սրտերում, որի վկայությունը եղավ հաղթանակը Արցախյան հերոսամարտում, Հայոց բանակի առավել հզորացումը եւ նշանակալի ձեռքբերումները:*

*Որպես Ամենայն Հայոց Հայրապետ՝ այսօր փառք եւ գոհություն ենք վերառաքում Ամենակարող Աստծուն, որ զորեղ է Հայոց բանակը ազգանվեր ծառայությամբ մեր զորականների ու զինվորների, ովքեր գիտակցում են, որ հաղթանակը ձեռք է բերվում ոչ միայն զենքով, այլեւ առ Աստված հավատքով, Հայրենյաց սիրով, ազգային սրբազան մեր արժեքները պաշտպանելու նախանձախնդրությամբ ու հոգու խիզախումներով:*

*Սիրելի՛ զինվորներ եւ զորականներ, երկնավորի օրհնությունն ու հովանավոր Աջի զորակցությունն ենք հայցում ձեզ, որպեսզի մշտարթուն ծառայությամբ լինեք պաշտպանը խաղաղության, բարու, արդարության ու ճշմարտության: Թող Աստված խաղաղ պահի Հայրենի մեր երկիրը, հայոց պետականությունը, զորացնի յուրաքանչյուրիս մեր ծառայության մեջ եւ մաքուր երկնքի ներքո առաջընթաց ու բարօրություն պարգեւի աշխարհասփյուռ մեր ժողովրդին: Թող միշտ շողա փառքն ու պարծանքը Հայոց բանակի՝ հանուն Տիրոջ Սուրբ Անվան, հանուն հայոց ներկայի ու գալիքի:*

***Պահպանիչ եւ յոյս հաւատացելոց Քրիստոս Աստուած մեր,***
***պահեա՛ եւ պահպանեա՛ զհայրենի երկիրս մեր Հայաստան, զիշխանութիւն եւ զպաշտօնեայս սորա, զզօրս եւ զզօրականս Հայոց բանակի, զեկեղեցիս Հայաստանեայց եւ զազգս Հայոց***
***ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական Խաչի Քո ի խաղաղութեան.***
***փրկեա՛ եւ ազատեա՛ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամեաց:***
***Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր***
***եւ ընդ Սրբոյ Հոգւոյն,***
***այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:***

---

*21 օգոստոսի*

## ՏՈՆ ԾՆՆԴՅԱՆ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

ՎԵՀԱՓԱ՛Ռ ՏԵՐ



Ի խորոց սրտի շնորհավորելով Ձերդ Սրբության ծննդյան օրը՝ մեր անկեղծ աղոթքն ենք առաքում Տիրոջը, որ Նա Իր անպարփակ սիրո երանավետության մեջ պահի-պահպանի, երկար կյանք, անսպառ էներգիա եւ կորով շնորհի Հայոց Հայրապետին, հավելի Ձեր բոլոր այն արժանիքները, որոնց շնորհիվ ու առաքելությամբ արդեն տասը տարի է՝ աննախադեպ կերպով շենացնում եւ շքեղացնում եք Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին: Աղոթում ենք, որ Տերը Ձեր կյանքի խռովահույզ ու տրտմած օրերը հանդերձավորի Իր մշտնջենական ու անխռով խաղաղությամբ, պարգեւի Ձեզ գալիք օրվա լիալույս ու բերկրանքի տեսլական, որպեսզի Ձեր հովվապետությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քրիստոսաբուխ հավերժագնա լույսը հետայսու առավել շողարձակի եւ սիրով ու նորոգ հավատով այն բաշխվի թե՛ մայր հողում ապրող եւ թե՛ աշխարհով մեկ սփռված մեր ժողովրդի զավակներին:

Աղոթում ենք, որ Ձեր կյանքի բոլոր օրերում՝ ամեն ժամ, ամենուր Աստված Ձեզ Իր անձանձրույթ սիրով, հայրական Իր հոգածությամբ առատ ու օգնական լինի:

Որդիական սիրով՝
Մատչիմք համբոյր
Ձերդ Օծեալ Սուրբ Աջոյն՝

***«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն***

---

## Ժողով Թրոնդհայմում

Հուլիսի 27-29-ը Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպս Միրզախանյանը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տեղեկատվական համակարգի տնօրեն Վահրամ քհն. Մելիքյանը մասնակցեցին Թրոնդհայմ (Նորվեգիա) քաղաքում կայացած «Կանոնակարգ սրբավայրերի վերաբերյալ» միջազգային ժողովին՝ կազմակերպված «Օսլոյի խաղաղության կենտրոն» եւ «Մեկ աշխարհի երկխոսության մեջ» կազմակերպությունների կողմից:

Ժողովականները քննարկումների արդյունքում մշակեցին եւ ընդունեցին կանոնակարգ՝ սրբավայրերի գործածության, ինչպես նաեւ սրբավայրերի հանդեպ տարբեր կրոնական համայնքների իրավունքների պաշտպանության վերաբերյալ:

Ժողովին մասնակցում էին քրիստոնյա, մահմեդական եւ հուդայական կրոնական եւ քաղաքական գործիչներ, Եվրոպայի եւ Միջին Արեւելքի տարբեր երկրների գիտնականներ:

# ՎԵՐԱՓՈԽՈՒՄ



Քրիստոսի Եկեղեցին բազմաթիվ տոներ է նվիրել սուրբ Աստվածածնին: Տիրամորը նվիրված տոների մեջ իր առանձնահատուկ նշանակությունն ունի Աստվածածնի Վերափոխման տոնը: Այն Հայ Առաքելական Եկեղեցու հինգ տաղավար տոներից չորրորդն է: Մեզ համար նվիրական այս տոնը սովորաբար նշվում է ամեն տարի օգոստոսի 15-ի (այս տարի՝ օգոստոսի 16-ին, պատարագիչն էր Արարատ եպս Գալթագճյանը) մերձակա կիրակի օրը:

Ըստ սրբազան ավանդության՝ Հիսուս Քրիստոսը խաչելության ժամանակ չմոռացավ Իր մորը եւ նրան խնամատարության հանձնեց Հովհաննես աստվածաբան առաքյալին: 15 տարի շարունակ Մարիամը հարատեւում էր աղոթքների եւ պահեցողության մեջ, մշտապես այցելում Որդու գերեզմանն ու ծնկաչոք աղոթում: Այդ այցելություններից մեկի ժամանակ էլ նրան է հայտնվում Գաբրիել հրեշտակապետը՝ ավետելով նրա՝ երկրից երկինք վերափոխվելու լուրը: Երբ Տիրամայրն արդեն մահամերձ էր եւ առաքյալները շրջապատել էին նրա զարդարված մահիճը, հանկարծ աննկարագրելի մի լույս է երեւում: Շլացուցիչ այդ լույսերի եւ ճառագայթների մեջ հայտնվում է հենց Ինքը՝ Հիսուս Քրիստոսը՝ շրջապատված հրեշտակների բյուրավոր զորքերով ու սրբերով: Տեսնելով իր Որդուն՝ Աստվածամայրը հանգիստ ավանդում է հոգին՝ հենց Որդու ձեռքերի մեջ: Սա է համառոտ այն ավանդությունը, որն ընկած է Վերափոխման տոնի հիմքում:

Ընդհանրապես եկեղեցական տոներն անիմաստ եւ ձեւական կդառնան, եթե մենք չկարողանանք ըմբռնել դրանց իմաստն ու խորհուրդը, չկարողանանք դրանցից դասեր քաղել եւ աստվածային ճշմարտություններն ու պատվիրանները կիրառել մեր կյանքում: Բավական չէ միայն ավանդույթի կամ նախնյաց օրինակով եկեղեցի հաճախելը, մոմ վառելն ու այս կամ այն տոնին պարզապես մասնակցելը, այլ պետք է այդ ամենին գիտակցաբար մոտենալ, թափանցել դրանց խորհուրդների մեջ:

Այդ առումով բացառություն չէ նաեւ Վերափոխման տոնը: Չնայած դարեր են անցել վերոգրյալ պատմական դեպքից, բայց՝ Տիրամայրն իր օրինակով շարունակում է լուսավորել մարդկանց հոգիներն ու սրտերը, ցույց տալիս ճշմարիտ, զոհողության պատրաստ մոր սերն իր զավակի հանդեպ, ինչպես նաեւ՝ զավակի անհուն սերն էլ Իր ծնողի նկատմամբ: Վերափոխման պատմության մեջ ցանկանում ենք կարեւորել հենց ծնող-զավակ հարաբերությունը, որն արդիական է նաեւ մեր օրերում: Ի դեմս Տիրամոր՝ մեր առաջ հառնում է ճշմարիտ եւ սիրող մոր կերպարը, իսկ Հիսուսի օրինակի մեջ՝ երախտագետ զավակինը, Ով չլքեց Իր ծնողին անգամ անասելի չարչարանքների ժամանակ եւ հոգ տարավ նրա մասին, իսկ երբ մայրը պատրաստվում էր ավանդել հոգին՝ անձամբ եկավ եւ նրան Իր մոտ տարավ:

Եկեք մի պահ նայենք մեր շուրջը եւ տեսնենք, թե ինչպես ենք վերաբերվում մեր ծնողներին. հոգատա՞ր ենք նրանց հանդեպ, թե՞ անտարբեր, լքե՞լ ենք նրանց, թե՞ շրջապատել սիրով ու գորովանքով: Չէ՞ որ մեր ծնողները տառապել են մեզ համար, ինչքա՜ն անքուն գիշերներ են անցկացրել եւ բազում զրկանքներ կրել: Նրանք իրենց երիտասարդության լավագույն տարիները նվիրել են մեզ այն հույսով, որ մենք, հասակ առնելով, գոնե չպետք է լքենք իրենց:

Ցավոք սրտի, զավակներ ունեցող բազում ծնողներ այսօր կյանքի բերումով հայտնվել են ծերանոցներում կամ նմանատիպ այլ հաստատություններում, եւ նրանց մասին հոգ են տանում ոչ թե իրենց սեփական զավակները, այլ ուրիշներ: Զրուցում ես այդ ծերերի հետ, տեղեկանում նրանց կյանքի, զավակների մասին ու ակամայից ցավ ու տխրություն ապրում: Ցավդ ահագնանում եւ եռապատկվում է, երբ իմանում ես, որ նրանց որդիներից շատերն ապրում են բարվոք պայմաններում, զբաղեցնում բարձր պաշտոններ, երբեմն, անգամ ի ցույց մարդկանց, նրանք օգնում են ուրիշների, բայց նրանց ծնողների մասին հոգում են ուրիշները: Սա հարիր չէ քրիստոնյա մարդուն, որի համար առաջին հերթին տիպար օրինակ պիտի լինի հենց հավատքի զորագլուխը՝ Հիսուս Քրիստոսը, Ով իբրեւ ճշմարիտ զավակ, երբեք չլքեց Իր մորը, չմոռացավ նրա մասին: Յուրաքանչյուր ծնողի համար ցավ է լքված լինելը. այսպես խախտվում է ծնող-զավակ ներդաշնակ հարաբերությունը:

Ծնողներին պատվելու աստվածային պատվիրանն ուղղված է ամենքիս: Մենք ոչ միայն պետք է պատվենք մեզ կյանք պարգեւած մեր հորն ու մորը, այլեւ սիրենք, գուրգուրենք եւ փայփայենք նրանց: «Պատվի՛ր քո հորն ու մորը, որպեսզի բարիք գտնես, երկար ապրես բարեբեր այն երկրի վրա, որ Տեր Աստված տալու է քեզ»,- ասում է Սուրբ Գիրքը (Ելք Ի 12): Եթե այսօր մենք ճիշտ չենք վերաբերվում մեր ծնողներին, ապա ինչպես կզգանք մեզ, երբ մեր զավակները նույն կերպ վերաբերվեն մեզ. չէ՞ որ՝ ինչ ցանենք, այն էլ կհնձենք, չէ՞ որ՝ ինչ տեսնի մեր զավակը, այն էլ պիտի սովորի: Հետեւաբար, շատ կարեւոր է պահպանել ծնող-զավակ ջերմ հարաբերությունները՝ անկախ կյանքի պայմաններից:

Ուստի եկեք հայցենք սուրբ Աստվածամոր բարեխոսությունն Ամենակալի առաջ, որպեսզի Տերը մեզ իմաստություն եւ սիրելու շնորհ պարգեւի՝ այս կյանքում անսայթաք քայլելու, բարիք գործելու եւ երբեք չմոռանալու աստվածային պատվիրանների մասին:

*Հասմիկ ՉԻՐՈՅԱՆ*

# ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՆՇԱՆԱՎՈՐ ՈՒԽՏԱՎԱՅՐԵՐԸ

Ուխտավոր հավատացյալը, հոգու եւ մտքի ներդաշնակությամբ, Աստծուն տեսնելու ու Նրա հետ հաշտվելու ակնկալությամբ պետք է ճանապարհ ելնի դեպի սրբավայր, քանզի այնտեղ նա պետք է իր սիրտը բացի Արարչի առաջ՝ սկսելով մտերմիկ զրույց՝ «ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ»: Ուխտագնացությունների միջոցով քրիստոնյա հավատացյալը խորհրդական ու աղոթական հայեցողությամբ անցյալը դարձնում է ներկա՝ այդ անցյալի հետ կապվելով հոգու, սրտի ու մտքի անդրադարձումներով:

Հիրավի, Հայոց աշխարհը հարուստ է պատմական ուխտավայրերով, մշակութային կոթողներով, հոգեւոր-գիտական կենտրոններով, որոնց շարքում նշանավորներից են Հառիճավանքը, Լմբատավանքը եւ Մաքենյաց վանքը:

**Հառիճավանքը** գտնվում է Շիրակի մարզի Հառիճ գյուղում՝ Արագածի հյուսիսային լանջին, երկու ձորակներով առաջացող հրվանդանի վրա: Այն կառուցվել է Է-Ը դդ., որի մասին վաղագույն հիշատակությունը տալիս է պատմիչ Մխիթար Անեցին: ԺԱ դ. սելջուկյան արշավանքների ժամանակ վանքն ավերվում է, այն ԺԳ դ. վերականգնվում է



վանքի առաջնորդ Գրիգորի կողմից: Գնելով Հառիճ գյուղը եւ շրջակա հողերը՝ Զաքարե ամիրսպասալարը ձեռնարկում է վանքի Ս. Աստվածածին գլխավոր եկեղեցու շինարարությունը, որն ավարտվում է 1201 թ.: Նա եկեղեցին զարդարում է սպասքով եւ մասունքներով, կատարում բազմաթիվ նվիրատվություններ: Վանքի արեւելյան մասում պահպանվել է պարսպի շինարարությունից մի հատված՝ կամարակապ մուտքով: Հառիճավանքի կառույցների շատ վիմափոր արձանագրություններ վանքի վերաբերյալ տեղեկություններ են հաղորդում մինչեւ ԺԳ դ.: 1795 թ. վանքն ավերվում է պարսկական հրոսակների ասպատակությունից: 1830 թ. ռուս-թուրքական պատերազմից հետո Կարսի առաջնորդ Ստեփանոս արք. Խաժակյանը հաստատվում է Հառիճավանքում՝ մինչեւ 1841 թ.՝ լինելով տեղի վանահայրը:

Հառիճավանքի հնագույն կառույցը Ս. Գրիգոր կենտրոնագմբեթ-խաչաձեւ եկեղեցին է, որը հարավ-արեւելքից ունի քառանկյուն հատակագծով ավանդատուն: Երկրորդ ավանդատունը Ս. Գրիգոր եկեղեցուն կցվել է հարավ-արեւմուտքից: Նախապես եկեղեցու գմբեթը եղել է կղմինդրե ծածկ, իսկ 1863 թ. այն վերակառուցվում է քարով: ԺԲ-ԺԳ դդ. Ս. Գրիգոր եկեղեցուն արեւմուտքից միանում է գավիթը, որը չի պահպանվել:

Հառիճավանքի Ս. Աստվածածին եկեղեցին ներկայացնում է ԺԱ-ԺԲ դդ. Հայաստանում տարածված դահլիճի տիպը՝ մի տարբերությամբ, որ այստեղ արեւմտյան կողմի երկրորդ հարկի ավանդատները փոխարինված են եռակամար բացվածքներով սյունազարդ օթյակներով: ԺԳ դ. եկեղեցուն կից կառուցվում են գավիթն ու վանքի ջրմուղը: Ս. Գրիգոր եկեղեցուց հյուսիս-արեւելք գտնվում է Հառիճավանքի դպրատունը, որից հարավ-արեւմուտք՝ մենավոր ու անմատչելի ժայռի վրա, տեղադրված է «ճգնավորի մատուռը»: Վանքն արեւելքից եւ հյուսիսից պաշտպանված է պարսպով, իսկ հարավից եւ արեւմուտքից՝ ձորով: Հառիճավանքի տարածքից դուրս՝ գերեզմանատանն են գտնվում ԺԳ դ. կառուցված Ս. Հարություն եկեղեցու ավերակները: Հառիճավանքը միջնադարյան Հայաստանի հոգեւոր-մշակութային հայտնի օջախներից էր, որն ըստ պահպանված ձեռագիր մատյանների՝ եղել է նաեւ գրչության կենտրոն:

**Լմբատավանքը** գտնվում է Շիրակի մարզի Արթիկ քաղաքից հարավ-արեւմուտք՝ բարձունքի



լանջին: Լմբատավանքի Ս. Ստեփանոս խաչաձեւ-գմբեթավոր եկեղեցին կառուցվել է Զ-Է դդ. սրբատաշ կարմիր տուֆով: 1191 թ. Վահրամ Պահլավունի իշխանի որդի վանահայր Բարսեղը, համաձայն գմբեթի արձանագրության, անօրեն սելջուկներից հետ է գնում Լմբատավանքը՝ նրան նվիրելով Ցիցք գյուղը եւ վերստին ջուր անցկացնելով: ԺԳ դ. վանքն իր կալվածքներով անցնում է Զաքարյանների իշխանության տակ: Ուշ միջնադարում Լմբատավանքը լքվում է եւ ամայանում: 1954 թ. վանքի շուրջը կատարված պեղումների ժամանակ գտնվում են խաչքարերի պատվանդաններ, Թ-Ժ դդ. գերեզմաններ, քանդակազարդ բեկորներ, կղմինդրներ: 1955 թ. վերանորոգվում են Լմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցու պատերը, վերականգնվում են տանիքի ու գմբեթի տուֆե ծածկասալերը: Ուշագրավ են հատկապես եկեղեցու որմնանկարները, որոնք Է դ. հայ քրիստոնեական գեղանկարչության բարձրարժեք եւ ինքնուրույն նմուշներից են:

**Մաքենյաց (Մաքենոցաց)** վանքը գտնվում է Վարդենիսի շրջանի Մաքենիս գյուղեզրին՝ գետակի բարձրադիր աջ ափին: Լինելով Հայաստանի կրոնագիտական նշանավոր կենտրոններից մեկը՝ նրա մասին մատենագրական հիշատակություններ են պահպանվել տակավին վաղ միջնադարից: Պատմիչ Ստեփանոս Օրբելյանը վկայում է, որ տեղի վանահայր Սողոմոն վարդապետը 701 թ. կազմում է տերունական տոների մեկնությունը եւ «Վարք սրբոց» ու «Յայսմաւուրք» ժողովածուները: Ը-Թ դդ. Մաքենյաց վանքի դպրանոցի սաներից են եղել Ստեփանոս Սյունեցին, Վահան Գողթնացին, Սողոմոն Ա Գառնեցի եւ Մաշտոց Ա Եղիվարդեցի հայրապետները: 728 թ. պարսից հրոսակախմբերը Ատրպատականից ներխուժում են Գեղարքունիք, սրի մատնում 1500 մարդու, կողոպտում վանքը, այրում ու ավերում հարակից շինությունները:



Լքված ու ավերակ դարձած վանքը վերականգնվում է 788 թ. Սողոմոն կաթողիկոսի կողմից: 855 թ. Գեղարքունիք ժամանած Հովհաննես Դ Ովայեցի հայրապետը հովվապետական իր այցելության ժամանակ վախճանվում է եւ թաղվում Մաքենոցաց վանքում: Թ դարավերջին Սյունյաց Գրիգոր իշխանը վանքի միանավ բազիլիկ եկեղեցուն կից սրբատաշ տուֆով կառուցում է Ս. Աստվածածին եկեղեցին՝ միաժամանակ վանքը շրջապատելով բարձր պարիսպով: Ս. Աստվածածին եկեղեցին ունի գմբեթավոր, խաչաձեւ-ուղղանկյուն, եռախորան, արեւելքում եւ հյուսիսարեւմտյան անկյունում ավանդատներով հորինվածք: Վանքի հարավարեւելյան կողմում գտնվում են միմյանց կից երկու թաղածածկ եկեղեցիները՝ կառուցված Ժ դ.: 1170 թ. Ս. Ներսես Շնորհալին վերցնում է Մաքենյաց վանքի մշակած եկեղեցական ժամակարգությունը եւ կիրառում հայկական մյուս վանքերում: Անկախանալով եւ օրավուր հզորանալով՝ Մաքենոցաց վանքն իշխել ու հոգեւոր ղեկավարություն է ստանձնել ողջ Գեղարքունիք գավառում՝ 1513 թ. միայն ընդունելով Տաթեւի վանքի գերակայությունը: Վանքում է պահվել «Մաքենյաց Ս. Նշան» հրաշագործ խաչը՝ Տիրոջ Կենաց փայտի մասունքով, որը ԺԱ դ. այստեղ էր բերվել Եդեսիայից:

*Եղիա աբեղա ԽԱՉԱՏՐՅԱՆ*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԱՐԻՍՏԱԿԵՍ Բ ԱԹՈՌԱԿԱԼ (1465-1469)

Գրիգոր Ժ-ի մահը խնդիրներ չստեղծեց, քանի որ գոյություն ուներ երկու աթոռակից կաթողիկոս: Ուստի նրան փոխարինեց Արիստակես Բ Աթոռակալը: Ազգային ժողով չգումարվեց, սակայն այնքան խառնակ էին ժամանակները, որ ոչ ոք նման հարց չբարձրացրեց: Ավելին. այդ անցումը նվիրագործվեց եւ կանոնական դարձավ ապագայի համար: Արիստակեսի մասին մեզ տեղեկություններ չեն հասել:

Այս ընթացքում՝ 1467 թվին, Ջահան-շահը պարտություն կրեց ակ-կոյունլուներից, իսկ սպանված Ջահան-շահին փոխարինեց նրա որդի Հասան Ալին: Ակ-կոյունլուների արքա դարձավ Ջհանգիրի որդի Ուզուն Հասանը, այլ խոսքով՝ Երկայնահասակ Հասանը:

Աղթամարում կաթողիկոս դարձած Ստեփանոսը, որ հաջորդել էր Զաքարիային, ոչ միայն իր ձեռքում ուներ Լուսավորչի Աջը, այլեւ նախորդից ավելի ձեռներեց էր: Սա եւս փորձ արեց տիրանալ Ամենայն Հայոց կաթողիկոսությանը: Գրիգորի մահը հարմար դիտվեց այդ քայլին դիմելու համար: Նա 1467 թվին գնաց Էջմիածին եւ տիրեց կաթողիկոսությանը, ինչպես հաղորդում է Կիրակոս Ջոշկանց երեցը: Եվ քանի որ դա տեղի էր ունեցել Ջահան-շահի օրոք, պետք է կարծել, որ Ստեփանոսին հաջողվել էր շահել կարա-կոյունլուների տիրակալի պաշտպանությունը: Սակայն այս անգամ էլ բախտը չժպտաց աղթամարցիներին, քանի որ, ինչպես ասվեց, Ջահան-շահը պարտվել էր ակ-կոյունլուների առաջնորդ Ուզուն Հասանից, ով փորձում էր վրեժխնդիր լինել հոր՝ Ջահանգիրի համար: Ջահան-շահը սպանվեց, իսկ ակ-կոյունլուները խիստ ուժեղացան: 1468 թվին պատերազմում ակ-կոյունլուների ձեռքից զոհվեց նաեւ Ջահան-շահին հաջորդած Հասան Ալին, իսկ նրա ազգակիցները գերի ընկան: Ակ-կոյունլուները գրավեցին կարա-կոյունլուների պետությունը, որի գլուխ կանգնեց Ուզուն Հասանը, ում իշխանության տակ էին գտնվում ամբողջ Միջագետքը, Պարսկաստանը, Հայաստանը: Քրիստոնյաները նրա օրոք մի փոքր ազատ շունչ քաշեցին: Նոր պայմաններում կարճատեւ պաշտոնավարությունից հետո Ստեփանոսը, Զաքարիայի օրինակով, փախուստ տվեց Էջմիածնից: Շատ հավանական է, որ Լուսավորչի Աջը Ստեփանոսի կողմից կրկին բերվեց Էջմիածին եւ փախուստի ժամանակ վերադարձվեց Աղթամար: Այլ խոսքով՝ Ստեփանոսն Էջմիածնում չէր կարող դառնալ Ամենայն Հայոց կաթողիկոս՝ առանց այնտեղ բերելու Լուսավորչի Աջը: Իսկ Ջհանգիրի հաջորդ Ուզուն Հասանը հազիվ թե ներել էր Զաքարիա Աղթամարցուն, որ նվաստացուցիչ հարկատվության էր համոզել իր հորը՝ Ջահան-շահին: Ստեփանոսի փախուստն Էջմիածնից տեղի ունեցավ 1468 թվին:

Ստեփանոսի փախուստով Արիստակեսը վերահաստատվեց Էջմիածնի աթոռին: Նրա կարեւոր գործերից մեկը եղավ 1467 թվին լեհահայերի համար եպիսկոպոս ձեռնադրելը: Հայերը Լեհաստանում հաստատվել էին դեռ մինչեւ 1065 թվականի Անիի նվաճումն Ալփ-Ասլանի կողմից: Այդ ժամանակ Շիրակից ու Անիից մեծ գաղթականություն հեռացավ դեպի Հյուսիսային Կովկաս ու մերձսեւծովյան



տափաստանները եւ նշանակալից մասով հաստատվեց Լեհաստանում՝ ձեռք բերելով լեհ թագավորների պաշտպանությունը: Հայերը հիմնականում կենտրոնացան Իլվով կամ Լվով քաղաքում, որը գերմանացիները Լեմբերգ էին կոչում: Լվովը 1259 թվից անցել էր մեծ քաղաքների շարքը: Հայերի՝ Լվովում հաստատվելու ճշգրիտ ժամանակը հայտնի չէ: Սկզբում նրանք հաստատվեցին քաղաքից դուրս՝ որպես իրենց հիմնած թաղամասում, եւ այնտեղ սեփական եկեղեցիներ կառուցեցին: Արդեն 1173 թվին նրանք արտոնություն էին ձեռք բերել՝ փայտաշեն եկեղեցի կառուցելու: Վերջինիս տեղում 1363 թվին հայերը քարաշեն եկեղեցի են կառուցում: Ճարտարապետներն էին կաֆացի Հակոբ Շահնշահյանը, ղազալցի Փանոս Ավրանյանը: Այդ նույն թվականին հիշատակվում է Լվովի առաջին եպիսկոպոս Հովհաննեսը, որ ձեռնադրվել էր 1365 թվին՝ Մեսրոպ Արտազեցու կողմից: Նաեւ տեղեկություն է պահպանվել Խաչատուր եպիսկոպոսի մասին՝ 1467 թվին: Նրան ձեռնադրել էր Արիստակեսը: Այդ նույն ժամանակ Լեհաստանում, որպես նվիրակներ, հիշվում են Անանիա արքեպիսկոպոսը եւ Թովմաս եպիսկոպոսը, սակայն հայտնի չէ, թե նրանք որ աթոռների կողմից են ուղարկվել: Նրանց գալու կապակցությամբ ժողով է հրավիրվում քաղաքին հանդիպակաց մենաստանում, որը, ամեն ինչից դատելով, Հաճկատար Աստվածածին վանքն է: Այստեղ քննարկվում են եպիսկոպոսարանի եւ եպիսկոպոսի իրավասությունների հարցերը: Պարզվում է, համաձայն ժողովի արձանագրության, քաղաքում եղել է տանուտերերի մարմին, որին Խաչատուր եպիսկոպոսը խոստանում է առանց տանուտերերի հարցեր չլուծել: Հայերին տրված նման իրավասություններն արդյունք էին Լեհաստանի թագավոր Կազիմիր Գ Մեծի՝ հայերի հանդեպ ունեցած բարյացակամության: Արտոնությունները լվովցիներին թագավորը տվել է 1356 թվին, իսկ դրանից առաջ՝ 1344 - ին, ազատ քաղաքի իրավունք էին ստացել Կամենից-Պորտավի հայերը: Վերջիններս կարող էին սեփական «վույթ» կամ իշխանապետ եւ 12 դատավոր ունենալ՝ քաղաքային եւ դատական գործերը վարելու համար: Հենց դա էլ հայերը կոչում էին տանուտերաց ժողով:

Արիստակեսը կաթողիկոս է հիշվում Ամիրդովլաթ Ամասիացու կողմից 1469 թվի դեկտեմբերի 26-ին: Այլ հիշատակներ, գոնե մեզ, հայտնի չեն, ուստի թերեւս այդ թվին էլ նա մահացել է: Նրա գործունեությունը մեծ մասամբ հայտնի չէ, ու եթե գովելու առանձին պատճառներ չկան, ապա նրան չի էլ կարելի մեղադրանքներ ներկայացնել: Այնուամենայնիվ, պետք է երախտապարտ լինենք. նա կարողացավ այդ խռովահույզ տարիներին Մայր Աթոռ Էջմիածնի իրավունքները պահպանել, Զաքարիա եւ Ստեփանոս Աղթամարցիներին դիմակայել: Նրան մեծապես նպաստեցին, իհարկե, Ուզուն Հասանի հաջողությունները՝ քաղաքական առումով, որոնցից, անտարակույս, նա կարողացավ արդյունավետ օգտվել:

*Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*
*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր*

---

*Նոր հրատարակություն*

## Պարույր Մուրադյան. «Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները»

Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հրատարակչական բաժինը «Հայ Եկեղեցու պատմության սկզբնաղբյուրներ» շարքից հրատարակել է Պարույր Մուրադյանի «Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները» արժեքավոր աշխատությունը:

Հին Թիֆլիսի մասին վկայություն բովանդակող հիշատակարանների, ուղեգրությունների, վավերագրերի եւ այլ նյութերի քննությամբ՝ հեղինակը ճշգրտում ու սահմանում է Վիրքի մայրաքաղաքում հայոց եկեղեցիների կառուցման ժամանակագրությունը, տեղորոշումը, հիմնախնդիրների ու սպասավորների ինքնությունը, վերծանում վիմագրերը: Պաշտամունքային եւ մշակութային օջախների պատմությունը դիտարկվում է տեղի հայկական համայնքի կազմավորման եւ գործունեության համատեքստում: Գրքում զետեղված է նաեւ նյութին վերաբերող 70 պատմական լուսանկար:

Գիրքը տպագրվել է տեր եւ տիկին՝ Արմեն եւ Նունե Սարգսյանների մեկենասությամբ:

## Կարգալույծ է հռչակվել Մխիթար քհն. Սարիբեկյանը

Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ՝ քահանայական կոչմանն անհարիր ընթացքի համար կարգալույծ է հռչակվել Արմավիրի թեմի հոգեւոր սպասավոր Մխիթար քհն. Սարիբեկյանը:

Կարգալույծ հռչակված քահանան այսուհետ կդասվի աշխարհականների շարքը եւ կկոչվի ավազանի անունով՝ Միսակ Սարիբեկյան:

---

## ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

# ՆԻՆՎԵԱՑԻՆԵՐԻ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Սկիզբը՝ թիվ 12-14*

Քաղաքը լսեց այս եւ միաբերան օրհնություն, գոհություն ու փառք վերառաքեց Աստծուն, որ իրենց փոխարեն մարգարեին էր դատում: Աստված սուտ դարձրեց մարգարեի խոսքը, եւ Հովնանը վրեժ էր լուծում Աստծուց, որպեսզի Աստված սուտ չլինի: Հովնանը վեր կացավ, մտավ քաղաք: Քաղաքացիներն ընդառաջ ելան եւ խոնարհվեցին նրան: Ժողովուրդն ընծաներ էր բերում նրան եւ տասանորդ մատուցում: Անմեղները տալիս էին իրենց մանյակները, երիտասարդները՝ իրենց ապարանջանները: Թագավորը մատուցեց իր թագն ու խույրը՝ ծոպերի հետ միասին: Նա բոլոր բերաններից փառավորվեց, ինչպես Աստված: Փառավորեցին Հովնանին եւ կառքի վրա հանեցին՝ որպես թագավոր: Ձուկը ծովում կրեց Հովնանին, կառքը՝ ցամաքի վրա: Մինչ շրջում էր ծովում, ձկներն էին գնում նրա առջեւից, ցամաքի վրա՝ հեծելազորը: Իջնելիս ճեղքեց ծովը, ելնելիս՝ ցամաքը: Ձուկը, որ կուլ տվեց նրան, ամեհի էր, թագավորը, որ լսեց նրան, խիստ էր: Ձուկը շավիղներ էր պատրաստում նրա համար, թագավորը՝ ճապարհներ հարթում: Ձկանը ձկներն էին ուղեկցում, նրա կառքին՝ զորքերը: Նինվեացիների արքան պատգամավորներ էր ուղարկում նրա առջեւ, որ մարգարեի համար օթեւաններ պատրաստեն, որ նրանց մեջ իջնի, Աստված ճանապարհ էր ցույց տալիս ձկանը, թե ինչպես գնա: Ընծաներով ու պատվով Հովնանը ելավ փառավորված կառքի մեջ ու գնաց, բոլոր մարդիկ ընդառաջ էին ելնում եւ ահով խոնարհվում նրա առջեւ: Թագավորներն էլ զարհուրում էին նրանից, եւ բոլորը սարսափում էին:

Ի՛մ եղբայրներ, մեծ կսկիծ ունեն մեր սրտերում, եւ ո՞վ լաց չի լինի: Մեզ համար ժամանակավոր կյանքը լավ է խոստացված կյանքից: Ժամանակավոր սեղանը սիրելի է արքայության սեղանից, եւ մեզ համար բանջարի պարտեզը լավ նրանից, ինչ ժառանգեց ավազակը: Այս աշխարհի սակավ ծառերի հետ փոխվեց կենաց ծառը: Անգամ մարդու սպառնալիքը մեզ ավելի է զարհուրեցնում, քան գեհենինը: Նինվեն տիեզերքի համար հայելի եղավ:

Երբ Հովնանը իր երկիր հասավ, ետ դարձրեց իրեն ուղեկցողներին: Հովնանը ամաչեց նրանցից. չլինի թե տեսնեն իր ժողովրդի կռապաշտությունը, չլինի թե տեսնեն այլազգիները եւ սովորեն նրանց մեղքերը: Ժողովրդի համար էր մտահոգվում. չլինի թե քակի կնքված ու բժշկված վերքերը: Վախեցավ Հովնանն իր ապականված ժողովրդից եւ ասաց. «Գուցե թե մտնեն ու ապականվեն այս ապաշխարողները»: Նրանց առանց պատճառի արձակել ամաչում էր, իսկ գնալուց՝ վախենում. չլինի թե Քանանի զավակները մտնեն ու այպանեն Աբրահամի զավակներին: Հովնանը շնորհակալություն հայտնեց նրանց, սիրով ողջունեց եւ օրհնեց նրանց սրբությամբ: Խնդրեց նրանց, բայց չպատկառեցին, խրատեց նրանց, բայց չլսեցին, հրաժեշտ տվեց նրանց, բայց ետ չդարձան, ասացին. «Գալիս ենք քեզ հետ քո երկիրը, որպեսզի նրանցից սրբություն սովորենք, քանզի օրհնյալ զավակ ու սուրբ ազգ են նրանք, քանզի սուրբ ազգատոհմ է ապրում նրանում: Մտնենք եւ տեսնենք այնտեղ պարկեշտներին, մտնենք եւ տեսնենք այնտեղ ընտրյալներին, մտնենք եւ տեսնենք այնտեղ արդարներին, մտնենք ու տեսնենք այն երկիրը, ուր չկա կռապաշտություն, մտնենք տեսնենք այն երանելիներին, որոնց մեջ նենգություն չկա: Մտնենք տեսնենք այն առաքինիներին, որ ուրիշների համար օրինակ եղան՝ հեռու լինելու բամբասանքների մեղքից: Մի՛ զրկիր մեզ, եբրայեցի՛, քեզ ուղեկցողներիս, մեր օգուտից: Քեզնով մենք ապաշխարողներ եղանք, քեզնով արդարներ լինենք: Մեր ոտքերի հոգնության փոխարեն թո՛ւյլ տուր մտնել քո ժողովրդի մոտ՝ նրանցից առնելու օրինակ, որ լի է օգուտով»:

Ո՞վ կկարողանար տանել այն խոսքերը, որ խոսեցին ապաշխարողները: Քանզի թեեւ այս եւ սրանից առավելն ասացին, Հովնանը լսում էր ու լռում՝ գլխահակ գետնին նայելով, որովհետեւ ամաչում էր իր ժողովրդի համար, որ անօրեն էր ու անիրավ: Ամաթի որդու համար սա ավելի վատ էր, քան այն, ինչ պատահեց դդմենուն, քանզի մահ խնդրեց իր անձի համար: Սա նրա համար իրեն ծովը գցելուց



ավելի վատ էր: Իսկ Հովնանը թաքցնում էր իր ժողովրդի անօրինությունը: Եվ ինչպես որ փախչելիս սուտ խոսքերով համոզեց նավավարներին, այդպես էլ համոզում էր նինվեացիներին. «Մեր երկրում տարեմուտի մեծ տոն է, եւ այլազգիներ չպետք է լինեն այնտեղ: Հիմա գնացեք, խաղաղությամբ վերադարձեք ձեր աշխարհը, իսկ հետո, երբ ավարտվեն մեր տոները, եկե՛ք»: Միամիտները լսեցին նրան, խոնարհվեցին ու հեռացան: Նրանից օրհնություն ստացան ու խաղաղությամբ գնացին իրենց երկիր:

Օրհնություն եւ փա՛ռք Աստծուն, որ չամաչեցրեց հեթանոս ժողովրդին, օրհնությո՛ւն Նրան, որ սիրեց արդար ապաշխարողներին, օրհնությո՛ւն Նրան ու Նրա Օծյալին: Մենք եւս ասենք՝ Օրհնություն եւ փառք Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:

*Գրաբարից փոխադրեց*
*Մարթա ԱՐԱԲՅԱՆԸ*

# ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 13-18-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

## (ընդհանուր ակնարկ)



*Գոշավանք, խաչքար, 1291 թ.*

*Սկիզբը՝ թիվ 14*

Կրթական եւ գիտական գործը համեմատաբար բարվոք վիճակում էր նաեւ Հայաստանում, որտեղ մեծ հեղինակության հասավ Գլաձորի համալսարանը (1280-1338)՝ հռչակվելով որպես երկրորդ Աթենք: Գլաձորի դադարումից հետո թափ առավ Տաթեւի համալսարանը (1345-1415), այնուհետեւ Մեծոփի վանքը:

Այս շրջանակներում գիտական համբավ են ձեռք բերում **Ներսես Մշեցին** (մոտ 13-րդ դարի սկիզբ - 1284), **Եսայի Նչեցին** (1260/1265-1338), **Հովհան Որոտնեցին** (1315-1386/1388, Օրբելյան տոհմից), **Գրիգոր Տաթեւացին** (1346-1410/1414), **Գրիգոր Խլաթեցի Ծերենցը** (մոտ 1350-1425): Հայտնի են նրանց փիլիսոփայական, աստվածաբանական, մեկնողական, դավանաբանական աշխատությունները:

Դրանցից են Տաթեւի եւ Ապրակունիսի վանքերի մեծահռչակ վարդապետ **Հովհան Որոտնեցու** կրոնական լուծմունքներն ու փիլիսոփայական մեկնությունները՝ տրված Արիստոտելի, Փիլոն Ալեքսանդրացու եւ Պորփյուրի երկերին:

Նշանավոր են **Գրիգոր Տաթեւացու** *«Գիրք հարցմանց* (ունի երկու տարբերակ. փոքր՝ 1387 թ. եւ մեծ՝ 1397 թ., տպագրվել է Կոստանդնուպոլսում, 1729 թ.), *«Գիրք քարոզութեան»* (գրել է 1407-ին, տպագրվել է Կոստանդնուպոլսում, *«Ձմերան հատոր»*, 1740, *«Ամարան հատոր»*, 1741) աշխատությունները: Հետագայում ավելացել են այլ քարոզներ, որոնց թիվը հասնում է մոտ 400-ի: Դրանք նվիրված են կրոնական տոներին եւ պատվիրանների բարոյական կարեւորությանը: *«Գիրք հարցմանց»*-ը հարց ու պատասխանի ձեւով լուսաբանում է կրոնական հարցեր: Խոսում է աղանդների մասին՝ ցույց տալով ճշմարիտ ճանապարհը: Նրա գրչին է պատկանում *«Ոսկեփորիկ»* (1401) ժողովածուն, որը եւս կրոնական հարցերի պատասխաններ ու բացատրություններ է պարունակում: Քանի որ Սուրբ Երրորդությունը ոսկու արժեք ունի քրիստոնեության համար, այստեղից էլ գրքի «Ոսկեփորիկ» վերնագիրը (նույն տեղը, էջ 586): Գրել է նաեւ կրոնական (Սաղմոսների, Երգ երգոցի, Առակաց, Հոբի, այնուհետեւ՝ Մատթեոսի եւ Հովհաննեսի ավետարանների), փիլիսոփայական (Արիստոտել, Պորփյուր, Դավիթ Անհաղթ) եւ այլ աշխատությունների մեկնություններ:

**Եսայի Նչեցին** գրել է վերլուծություններ, լուծմունքներ, մեկնություններ, դավանաբանական նյութեր եւ թղթեր:

**Հովհաննես Երզնկացի Ծործորեցին** (մոտ 1280-1355-ից հետո) գրել է Մատթեոսի ավետարանի եւ Դանիելի մարգարեության մեկնություններ: Նրան է վերագրվում Թովմա Աքվինացու *«Յաղագս խորհրդոց եկեղեցւոյ»* գրքի թարգմանությունը:

**Գրիգոր Խլաթեցի Ծերենցը** վերախմբագրել է *«Յայսմաւուրք»*-ը եւ չափածո շարադրել 1386-1422 թթ. պատմական դեպքերը՝ *«Յիշատակարան աղէտից»*:

Ե՛վ Որոտնեցու, ե՛ւ Տաթեւացու գիտական գործունեության վրա ակնհայտ է փիլիսոփա, պատմիչ **Վահրամ Րաբունու** (Սեւլեռնեցի, 12-րդ դար) ներգործությունը: Նա Կիլիկիայի հայոց պետության նշանավոր գործիչ էր՝ ջանցլեր: Մեկնություններ է գրել Արիստոտելի, Պորփյուրի, Դավիթ Անհաղթի, Գրիգոր Նյուսացու, Դիոնիսիոս Արեոպագացու աշխատությունների վերաբերյալ: Լեւոն Գ թագավորի օծման արարողության ժամանակ հանդես է եկել ճառով (տպագրվել է «Արարատ»-ում, 1868-1869 թթ.), որի մեջ արտացոլված են նրա քաղաքական հայացքները: Նույն Լեւոն Գ-ի պատվերով գրել է *«Ոտանաւոր պատմութիւն Ռուբինեանց»* (տպագրվել է 1859) պատմական երկը: Այն Շնորհալու *«Վիպասանութիւն»* պոեմի շարունակությունն է՝ որպես չափաբերված եւ հանգավորված (միահանգ՝ *եալ*) հայոց պատմություն:

Սա իր հերթին վերստին վկայում է, որ Հայաստանի արեւելյան եւ արեւմտյան կողմերը սերտ կապի մեջ էին նաեւ գրական-գիտական-փիլիսոփայական հետաքրքրությունների շրջանակում:

Գիտական ճյուղերից զարգանում էր նաեւ բժշկագիտությունը, որի խոշոր ներկայացուցիչներից է բազմաթիվ աշխատությունների հեղինակ **Ամիրդովլաթ Ամասիացին** (1420/1425-1496):

Այս շրջանում ապրել եւ ստեղծագործել են նաեւ այլ մատենագիրներ, որոնցից մեզ, դժբախտաբար, ոչինչ չի հասել: Այդպիսիներից է **Վանական վարդապետը** (1181-1251): Նրա անունը հաճախակի է հիշատակում Կիրակոս Գանձակեցին եւ եկեղեցական ժողովներից մեկի կապակցությամբ գրում. «Այս ժողովի բովանդակ եղելությունը՝ խոսքն ու գործը, իր պատմության մեջ նկարագրեց խորամիտ ու առատամիտ Վանական վարդապետը, որովհետեւ նա ականատես էր ու ականջալուր կատարված իրողություններին՝ այն ժամանակ լինելով մեծ վարդապետի [Մխիթար Գոշի] մոտ աշակերտ: Այս եւ ուրիշ իրողություններ գտնվում են [նկարագրված] նրա գրքում, ովքեր կամենում են [կարող] են դյուրությամբ սովորել» (**Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, 1982, էջ 132):

*Շարունակությունը՝ էջ 7*



*Սարգիս Պիծակի մանրանկարներից, Մատենադարան, ձեռագիր 7651*

# ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ

> «Քամին սարով կգնա,
> Հավքը կերգի պարտեզում.
> Հայից բնավ չի խլվի
> *Աստվածային իր լեզուն»*
> *(Մորիս Փոցխիշվիլի)*

Աստծված ստեղծելով մարդուն՝ նրան օժտեց խոսելու կարողությամբ: Խոսելը մարդուն տրված աստվածային մեծագույն պարգեւ է, որով նա կարողանում է իր մտքի ու սրտի գաղափարներն ու խորհուրդներն արտահայտել, հաղորդակցվել իր նմանի հետ. «Լեզուն մարդու երկրի վրա ժամանակավոր երջանկություն ունենալու գլխավոր պատճառներից մեկն է, որի համար մարդը պարտավոր է հատուկ շնորհակալություն հայտնել Աստծուն, որ իրեն մտքի հետ մեկտեղ օժտեց նաեւ խոսելու կարողությամբ, որով դրվեց մարդկային հարաբերության հիմքը, առանց որի մարդիկ ընկերական կյանք չէին կարող վարել» (Մարդկային լեզուին սկզբան..., Հ. Պօղոս Վ. Յովնանեանց, Վիէննա, 1857, էջ 22-23):

Ադամն ու Եվան, բնականաբար, հաղորդակցվում էին Աստծո հետ մի լեզվով, եւ դա դրախտային լեզուն էր, որն էլ դարձավ սկզբնական մարդկության ընդհանուր լեզուն մինչեւ աշտարակաշինությունն ու լեզուների խառնակումը:



Մինչ օրս ադամական լեզվի հետ կապված բազում կարծիքներ կան: Հնում շատ գիտնականներ համոզված էին, որ ադամական լեզուն եբրայերենն է, սակայն նրանք հաշվի չէին առնում մի պարզ ճշմարտություն, որ եբրայերենն առաջացել է ասորերենից Իսրայելի ձեւավորման ժամանակ եւ այդ պատճառով էլ չէր կարող լինել ադամական լեզուն: «Ճիշտ այնպես, ինչպես Հիսուս Քրիստոսը չէր խոսում Իր նախնիների լեզվով, Աբրահամը եւ իր սերունդները չէին տիրապետում իրենց սեփական նախնիների՝ Նոյի եւ Ադամի լեզվին» (Дэвид Рол-известный британский писатель и археолог, "Генезис цивилизации откуда мы произошли ...", Москва, 2005. ст. 155-157): Իսկ Մխիթարյան միաբանության անդամ Ղուկաս Ինճիճյանը գրում է. «Նախ հրեաները մինչեւ Աբրահամը դեռեւս որպես ազգ ձեւավորված չէին, այլ քաղդեացիներն էին ազգ կոչվում, ուրեմն տեսնում ենք, որ եբրայերենը ձեւավորվել է Աբրահամից հետո: Ինչպես նաեւ եբրայեցիների բնակության սկիզբը գտնում ենք քաղդեացիների աշխարհում, որը շատ հեռու էր գտնվում Նոյի բնակության վայրից, ինչի մասին տեղեկանում ենք Ծննդոցից. «Թարան իր որդի Աբրահամին...քաղդեացիների երկրից առավ տարավ քանանացիների երկիրը: Նրանք հասան Խառան եւ բնակվեցին այնտեղ (Միջագետքում)» (11:31)» (Հ. Ղուկաս Վ. Ինճիճեան, Հնախօսութիւն, Վենետիկ, 1835, էջ 26): Այսինքն՝ հրեա ազգը ձեւավորվեց Աբրահամի սերնդից, քանզի Աբրահամը ելավ քաղդեացիների միջից, որոնք հեռացել էին Նոյի մոտից, ուրացել ճշմարիտ աստվածպաշտությունը եւ կռապաշտ դարձել, որոնց թվում էր նաեւ Աբրահամի հայրը՝ Թարան, որոնք Նեբրովթից կռապաշտություն էին սովորել: Հետեւաբար եբրայերենը չէր կարող առաջին լեզուն համարվել: Շատ հեղինակներ էլ եբրայերեն լեզվի օգտին խոսում են զուտ Իսրայելի՝ որպես Աստծո ընտրյալ ժողովրդի հանդեպ ունեցած հարգանքից ելնելով, որոնցից են Հովհան Ոսկեբերանը, Եփրեմ Ասորին, Գրիգոր Տաթեւացին եւ այլք:

Սակայն Սուրբ Գրքից մեզ հայտնի է, որ ջրհեղեղից հետո Նոյն իր երեք որդիների հետ բնակվեց Արարատյան դաշտում եւ, բնականաբար, հենց Հայոց հողի վրա էլ Նոյը խոսում էր ադամական լեզվով, քանզի. «Այն ժամանակ ողջ երկիրը մեկ լեզվով, մեկ բարբառով էր խոսում» (Ծննդ. 11:1): Եվ եթե նույնիսկ ադամական լեզվից այլ բարբառներ էլ առաջացած լինեին, ինչպես կարծում են ոմանք, ապա Նոյը, լինելով Աստվածավախ եւ արդար մարդ, բնական է, որ պիտի պահեր ադամական սուրբ լեզուն՝ Աստծո հետ հաղորդակցման լեզուն:

Հայոց լեզուն ադամական լեզու համարելու համար կան հետեւյալ հիմքերը.

Նախ՝ երբ մարդկությունը բազմացավ Արարատյան դաշտում, եւ այն չբավարարեց նրանց, Նոյի սերնդից մի հատված հեռացավ դեպի Սենաար. «Սակայն բոլորը չելան Հայաստան աշխարհից, այլ այնտեղ մնացին նրանք, ովքեր բավականին տեղ ունեին իրենց եւ իրենց անասունների կարիքները հոգալու համար, այնտեղ մնաց նաեւ Նոյ նահապետը, քանզի Սուրբ Գիրքն էլ գրելով, թե Նոյը տապանից դուրս եկավ Հայաստանում, չի հիշատակում նրա այլ վայր տեղափոխվելը» (Նույն տեղում, էջ 9): Հեռանալով Նոյից ու նրա որդիներից՝ նրանք աստիճանաբար հեռացան նաեւ ճշմարիտ աստվածպաշտությունից եւ ձեռնամուխ եղան աշտարակաշինությանը. «ինչը չարության գործ էր, ինչպես Սողոմոնի Իմաստությունում աշտարակաշինության մասնակիցները կոչվում են. «միաբանությամբ չարության մեջ խռնված ազգեր» (Իմաստ. 10: 5) ... եւ ինչպես Սոդոմ եւ Գոմորի կործանումը... այդպես էլ լեզուների խառնակումը նորահաս պատիժ էր:

*Շարունակությունը՝ էջ 6*

*Սկիզբը՝ թիվ 11-14*

14-րդ դարի 30-ական թվականներին Կիլիկիայի Օշին թագավորի մահից հետո ստեղծված բարդ իրավիճակում շատերը չհասկացան պետականության արժեքը եւ ջանացին իրենց շահախնդրական ձկտումներն իրականացնել՝ անչափահաս Լեւոն թագավորին իրենց կողմը գրավելով եւ արքայահայր կամ պայլ Օշինի իշխանության դեմ կազմակերպված պայքար մղելով: Ներքին երկպառակությունները եւ մանավանդ արեւմտամետ հայ լատինամոլների գործունեությունն արդեն Կիլիկիայի հայոց պետականության համար ընդունել էին սպառնալից ու վտանգավոր չափեր: Անձնական երջանկության եւ պետական շահերի դրամատիկ հակասությունների բախման հանգույցում է հայ-

պատռուտուք»: Նա գիտի, որ շատ թանկ բան է կորցնելու պալատ գնալով, բայց եւ չի կարող իր կոչումից փախչել ու այդ զոհաբերությունից հրաժարվել: Նախապես գիտի նաեւ, թե ինչ է պալատական միջավայրը, ուր ինքը գնում է գործելու:

Այս ողբերգության մեջ էլ պատմության շրջապտույտի շանթյան տեսությունը վերածվում է գործնականի: Պատմությունը նորագույն ժամանակներում էլ ցավալիորեն կրկնվում էր, եւ ինչպես նախորդ՝ «Ինկած բերդի իշխանուհին» երկում, «Օշին պայլում» էլ Լ. Շանթը Կիլիկիա - Բյուզանդիա հարաբերության պատկերումով ակնարկում է Հայաստան - Ռուսաստան առնչությունները: Գրեթե նույնն են նաեւ Կիլիկիան եւ Հայաստանի Հանրապետությունը շրջապատող թշնամիները, որոնք այս անգամ եւս նրա դեմ գործում են ներքին թշնամու հետ միասնաբար:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԼԵՎՈՆ ՇԱՆԹԻ «ԻՆԿԱԾ ԲԵՐԴԻ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ» ԵՎ «ՕՇԻՆ ՊԱՅԼ» ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

տնվել Լ. Շանթի իդեալ ազգային-պետական գործիչը, դրամատիկական ողբերգության կենտրոնական դեմքը՝ Օշին իշխանը, որի գործունեության, վարքագծի ու բնավորության մեջ առկա են վերջին շրջանի ազգային պետական լավագույն գործիչների, այդ թվում եւ իր՝ հեղինակի կենսագրության որոշ տարրեր: Հանուն ազգային վեհ նպատակների եւ պետականության ամրապնդման զոհաբերվելու պատրաստ պատմական այդ հերոսը կերպավորված է որպես հակադրություն բոլոր այն հայ գործիչների, ովքեր չունեցան նրա ողջամտությունն ու ազնվությունը, ազգային ու մարդկային արժանապատվությունը եւ ճակատագրական պահերին ոչ միայն չկանգնեցին հայոց պետականության պահպանության դիրքերում, այլեւ խաղալիք դարձան արտաքին թշնամու ձեռքին եւ ներսից խարխլեցին ու քանդեցին այն:



Քառասնամյա Օշին իշխանը մտավորական է՝ օժտված բացառիկ պետական մտածողությամբ եւ անձնականը հայոց պետականության շահերին զոհաբելու բարձրագույն առաքինությամբ: Նա գիտի, որ պալատը իր տեղը չէ եւ նրա խարդավանքներից հեռու՝ Կոռիկոսի ծովափնյա իր ամրոցում գրում է հայոց վերջին դարերի՝ Կիլիկիայի երեքհարյուրամյա պատմությունը: Առաջին կնոջ մահից հետո նա սիրած էակի՝ դեռատի Ռիտայի հետ կարող է երջանկանալ: Բայց կյանքը պարտադրում է նրան զոհաբերել թե՛ իր ազատությունը, թե՛ սիրած ազգօգուտ գործը, թե՛ իր սերն ու երջանկության հեռանկարը: Մահամերձ Օշին թագավորի կողմից, որի կարծիքով Օշին իշխանը միակ վստահելի մարդն է իր թագավորության մեջ, Կոռիկոս ուղարկված պատվիրակությունը բերում է հիմնավոր փաստարկներ. իր կենսափորձով ու հմտություններով, ազնվությամբ ու կամային որակներով միայն Օշինն է արժանի լինելու անչափահաս Լեւոն արքային խնամակալ ու արքայահայր՝ Կիլիկիայում առանց թագի թագավոր: Երկիրը շրջապատող գիշատիչ հարեւանների նվաճողական նկրտումները միայն նա կարող է չեզոքացնել, միայն նա կարող է զսպել ներքին խժդժությունները ու օտարամոլների անհագուրդ ախորժակը եւ պահպանել Կիլիկիան: Պատվիրակության ղեկավար սրբազանն առաջարկում է աշխատանքի բաժանում. «…Դուն գրելը ձգե մեզի՝ վարդապետներուս, դուն ուրիշ գործ ունիս կատարելու, աշխատանքը պետք է բաժնվի: Դուն պատմությունը պիտի ընես, մենք պատմությունը պիտի գրենք» (նույն տեղում, էջ 701):

Իր արժեքն իմացող Օշինն անառարկելի այս փաստարկումներն արդարացի է համարում եւ հայոց պետությանը ծառայելը՝ իր մարդկային պարտականությունը, այսպես է նա պատմություն գրողից դառնում պատմություն կերտող: Բայց Օշինը՝ որպես գրական կերպար՝ կենդանի մարդկային բնավորություն է, ունի իր անձնական կյանքը եւ ամեն կարեւոր վճիռ կայացնելիս ապրում է ծանր հոգեկան դրամա, Շանթի բնորոշմամբ՝ «ներքին

Անչափահաս Լեւոն թագավորի արքայահայր Օշին պայլի մեջ կուտակված է պատմության փորձը: Նա հրաշալի է հասկանում անցողիկ ու մնայուն արժեքների հաշվեկշիռը, նախորդների՝ անցյալում թույլ տված սխալներն ու վրիպումները, ուստի միանգամայն գիտակցված է կատարում իր բոլոր զոհողությունները: Հարկադրված է հրաժեշտ տալ սիրած աղջկան՝ Ռիտային, եւ անհամբ նրան հաղորդել, որ պետության շահերն իրեն պարտադրում են ամուսնանալ այրի թագուհու հետ, որին ինքն էր ժամանակին հարս բերել Բյուզանդիայից Օշին արքայի համար: Քաղաքական բարդ իրավիճակում հայտնված պետության փաստացի ղեկավարությունը ստանձնելու պահից իսկ նա ըմբռնում էր, որ արտաքին թշնամիներից՝ Իկոնայի սուլթանությունից, Սիրիայի եւ Եգիպտոսի մամլուքներից շատ ավելի դժվար էր լինելու պայքարը իշխանական վերին ոլորտներում ծպտված ներքին թշնամիների՝ հավակնոտ հայ լատինամոլների եւ մանավանդ Կիպրոսի նախկին թագուհի Զաբել Ամորի Լուսինյանի ու նրա զավակների դեմ, որոնցից ամեն մեկը իրեն էր համարում Կիլիկիայի օրինական գահաժառանգ: Կային նաեւ Ներսես Պալոնցի, Հալկամ իշխանի, Սիր Աղանի, Սիր Բոլդինի, պարոն Բոհեմունդի, Մաքսուտ Երանիի, Ջուլին Անհողի, հայր Դոմինիկիի, պապի նվիրակ դը Շապի նման մարդիկ, որոնք, հայոց արքունիքում գործելով, ծառայում էին իրենց անձնական ու բյուզանդական կայսրության շահերին՝ ջանալով առավելագույն օգուտ քաղել ստեղծված խառնաշփոթ իրավիճակից:

*Շարունակությունը՝ էջ 8*

**Հայր Անատոլի ԲԵՐԵՍՏՈՎ**
**Բժշկական գիտ. դոկտոր**

# ՄԵՂՔ, ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, ԲԺՇԿՈՒՄ

*Սկիզբը՝ թիվ 13-14*

Հետաքրքիր է նաեւ երրորդ դեպքը, որ կրկին նույն բժշկի հետ է կատարվել: Նա հոգեւոր ծառայության մեջ էր արդեն եւ միաժամանակ որպես բժիշկ աշխատում էր խոշոր մի բուժական հաստատությունում: Մի անգամ՝ երեկոյան ժամերգությունից հետո, նրան է մոտենում չափազանց հուզված մի կին եւ դողացող ձայնով հարցնում. «Ասացե՛ք, Դուք բժի՞շկ եք»: «Այո՛, բժիշկ եմ»,- պատասխանում է սա: «Ես կարո՞ղ եմ այցելել Ձեզ հիվանդանոց»,- հարցնում է կինը: «Իհարկե, կարող եք հենց վաղը՝ ժամը 16-ին, գալ»: Նշանակված ժամին կինը ներս է մտնում բժշկի աշխատասենյակն ու արտասվելով ծնկում հատակին: Բժիշկը մոտենում եւ բարձրացնում է կնոջը, նստեցնում աթոռին, հանգստացնում եւ խնդրում պատմել, թե ինչ է պատահել: Եվ ահա թե ինչ է պատմում կինը:

13 տարի առաջ՝ իր երկրորդ ծննդաբերության ժամանակ, խիստ ծանր վիճակում է եղել եւ ի վերջո ընկել կլինիկական մահվան մեջ, որն, ըստ բժիշկների, տեւել է մոտ 5 րոպե: Այդ ընթացքում նա տեսել է, թե ինչպես է ինքը գահավիժում մի մութ ու խոր վիհ: Ճեղքվածքում, որտեղից նա ցած էր ընկնում, լույսը գնալով փոքրանում էր: Նա չէր վախենում. վիժանքը հեշտ էր եւ միաժամանակ չէր էլ հասկանում, թե ինչ է կատարվում իր հետ: Հանկարծ նրա անկումը կանգ առավ, եւ նա վերեւից՝ լույսի ճեղքից լսեց անծանոթ մի ձայն. «Վեր բարձրացի՛ր, բարձրացի՛ր, բարձրացի՛ր: Վաղ է քեզ թռչել, դու դեռ պիտի ապրես»: Նա գլուխը վեր է բարձրացնում եւ տեսնում, որ ինքն արդեն բարձրանում է, իսկ վիհի վրա կռացած է մի բժիշկ՝ փոքրիկ մորուքով եւ սպիտակ խալաթով: Նա էր այդ խոսքերն ասողը: Նա բարձրանում է վիհից, բժիշկը բռնում է նրա ձեռքը, մի կողմ տանում եւ ասում. «Իսկ հիմա գնա եկեղեցի»: Եվ այդ պահին նա արթնանում է ծննդաբերականի իր հիվանդասենյակում: Կինը հավատացյալ չէր, բայց այդ պահից ի վեր նա հավատում է Աստծո գոյությանն ու հանդերձյալ կյանքին, սակայն եկեղեցի չի գնում եւ աղոթական կյանքով չի ապրում: Եվ ահա 13 տարի անց, անձնական մի ծանր դիպվածի՝ ամուսնալուծության հետ կապված, նա գնում է եկեղեցի: Երբ մտնում է տաճար, տեղում քար է կտրում՝ լսելով զարմանալի ծանոթ մի ձայն: «Ե՞րբ եւ որտե՞ղ եմ լսել այս ձայնը: Աստված իմ, սա հենց այն բժշկի ձայնն է, որ ստիպեց ինձ դուրս գալ վիհից, երբ կլինիկական մահվան մեջ էի»: Մի կերպ առաջանալով՝ նա մոտենում է համարյա բեմին եւ հանձին այս հոգեւորականի, ով այդ պահին մաղթանք էր ասում, ճանաչում է նույն բժշկին: Ահա թե ինչու ժամերգությունից հետո մոտենում է նրան ու հարցնում, թե արդյո՞ք նա բժիշկ է:

Հաջորդ օրը բժշկի աշխատասենյակը մտնելով եւ նրան սպիտակ խալաթով, բժշկական սպիտակ գլխարկով եւ փոքրիկ մորուքով տեսնելով՝ կինն անմիջապես ճանաչում է իր տեսած բժշկին:

Սակայն այս բոլոր դեպքերի հետ ի՞նչ կապ ունի մեր բժիշկը: Չնայած իր խորապես հավատացյալ լինելուն, նա չհավատաց այդ երեխաներից ոչ մեկի ապաքինման հավանականությանը, եւ երբեք չի էլ իմացել այդ կնոջ գոյության մասին, ով իրեն տեսել էր կլինիկական մահվան ընթացքում:

Հավանաբար հավատացյալ բժշկի միջոցով ինչ-որ կերպ դրսեւորվել է Աստծո նախախնամությունը: Մեզ էլ է հայտնի շատ դեպքեր, երբ հավատացյալ որոշ բժիշկներ ակամա եղել են հիվանդների համար Աստծո կամքի եւ Աստծո նախախնամության առաջնորդողները:

Այդ ամենը վկայում է, որ բժշկի անձը շատ մեծ նշանակություն ունի հիվանդի՝ բժշկի հանդեպ մի առանձին վստահություն ունենալու խնդրում: Եվ, իհարկե, ուղղափառ բժիշկը, ի տարբերություն անհավատ կամ այլադավան բժշկի, ուղղափառ հավատք ունեցող հիվանդների համար միշտ առավել նախընտրելի է: Բժշկի եւ հոգեւորականի իմ փորձառությունից ելնելով՝ կարող եմ ասել, որ ուղղափառ բժշկին են ձգտում ոչ միայն ուղղափառ հիվանդները, այլեւ հրեաները, մուսուլմանները եւ այլ կրոնների ներկայացուցիչները:

Մաքրակենցաղ կյանքը, նախախնամությունը, աղոթքը, եկեղեցի այցելելը, Քրիստոսի սուրբ Խորհուրդներին հաղորդվելը, սերը մարդկանց հանդեպ եւ նրանց օգնելու ցանկությունը խիստ կերպով իր հետքն են թողնում բժշկի արտաքին



ու հոգեբանական կերպարի վրա, եւ հիվանդները ենթագիտակցորեն ձգտում են նրան: Չպետք է մոռանալ նաեւ, որ հավատացյալ բժիշկն ավելի գիտակցորեն է մոտենում իր պարտականություններին եւ աշխատում է դրանք ազնվորեն իրագործել: Սա էլ ահա հիվանդների համար նրան դարձնում է առավել առինքնող: Հիվանդները գիտեն, թե որ բժշկին պետք է հավատալ եւ նրան էլ վստահում են իրենց առողջությունը, կյանքն ու հոգին:

*Թարգմանությունը՝*
*Ռ. ԱՐՈՅԱՆԻ*

Կից մեծյակում

# «ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ» զրուցաշար

## ՀԱՅՐԵՐ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ

**Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Ղազար քհն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ**

*«Հայրե՛ր, մի զայրացրեք ձեր որդիներին, այլ մեծացրեք նրանց Տիրոջ խրատով եւ ուսումով»*

*(Եփես. Զ 4)*

**- Տե՛ր հայր, մարդկային հասարակության զարգացման բոլոր ժամանակներում էլ կարծես թե եղել է որոշակի հակասություն հայրերի եւ որդիների, հին ու նոր սերնդի միջեւ: Միեւնույն ժամանակ, գաղտնիք չէ, հասարակությունը զարգացել է հիմնական արժեքների փոխանցման շնորհիվ՝ հնից նորին, որտեղ, ի թիվս կարեւորագույն այլ գործոնների, մի շարք պատմաբաններ եւ փիլիսոփաներ հույժ նշանակալից են համարում վերոհիշյալ հակադրության դերը: Դուք համաձա՞յն եք այն մտքին, որ հնի եւ նորի միջեւ հակադրությունը պարտադիր պայման է զարգացման, առաջընթացի համար:**

- Նայած թե ինչ ենք հասկանում՝ զարգացում կամ առաջընթաց ասելով: Եթե մարդկային հասարակությունը եւ առհասարակ քաղաքակրթությունը զարգանում են ի հաշիվ աստվածադիր հոգեւոր ու բարոյական արժեքների անկման կամ այդ անկմանը զուգահեռ, ապա նման զարգացումը քրիստոնեական ընկալմամբ չի կարող դիտվել իբրեւ առաջընթաց: Առաջընթացը նախ եւ առաջ մարդու եւ մարդկային հավաքականության բարոյական ընթացքն է Տիրոջ նախանշած հոգեւոր շավիղներով, այսինքն՝ ընթացք դեպի Աստված: Առաջընթացի այս ընկալումը որպես համոզմունք ունենալու պարագայում որեւէ լուրջ հակասություն չի կարող լինել սերունդների միջեւ: Ինչո՞ւ: Որովհետեւ ծնող-զավակ տարածքում ի սկզբանե առկա է շնորհը՝ պարգեւն Արարչի, եւ հենց սա՛ պետք է գիտակցենք ամենքս: Իսկ հակադրությունն առաջանում է այս պարզ ճշմարտությունը նախ եւ առաջ մեր՝ ծնողներիս կողմից լիովին չգիտակցելու պատճառով, երբ շնորհը կա, սակայն մենք, փոխանակ շնորհընկալ եւ շնորհակալ լինելու Բաշխողից, մեզ ենք բաշխող կարծում: Հակասություն ծնող ախտը՝ մոլորությունը, սկսվում է այն պահից, երբ մարդիկ, արհամարհելով եւ ուրանալով Արարչի դերը, իրենք իրենց են արարիչ կարծում՝ իրենցից ծնված զավակին վերաբերվելով իբրեւ սեփական ստեղծագործության: «Ի՛մն է, ե՛ս եմ ծնել. ուրեմն պիտի լինի այնպիսին, ինչպիսին ես եմ ուզում, անի այն, ինչը ես ճիշտ եմ համարում»,- ծանոթ խոսքեր են, չէ՞: Այսպիսի մտայնությամբ առաջնորդվող ծնողն աստիճանաբար վերածվում է սովորական մի բռնակալի, որը մոռացել է միակ Արարչին ու ազատ կամք Պարգեւողին ու չի գիտակցում խնամակալի ու շնորհընկալի իր ծնողական երանելի պարտականությունը:

**- Արարիչն անգամ Իր անիմանալի մեծության ու անհաս փառքի մեջ, ստեղծելով ամբողջ տիեզերքը, երբեք բռնակալ չեղավ Իր արարչության պսակի՝ մարդու հանդեպ, այլ եղավ ողորմած ու գթառատ, սիրող ու ներող, համբերող Հայր բոլորիս համար: Բայց ահա մարդ-ծնողը կարող է բռնակալ լինել: Ինչո՞ւ:**

- Որքան հաճախ հայացքներս ուղղենք երկնքի ու երկրի Արարչին, այնքան կնվազի սխալվելու հավանականությունը: Ամեն բան արարելով, կյանքն արարելով՝ Աստված մարդուն պարգեւեց նաեւ ազատ կամք եւ նույնիսկ մեղանչելու հնարավորություն. «Սա բարի է, սա՝ չար, ես ուզում եմ, որ դու բարին ընտրես, բայց չեմ բռնանում, ընտրությունը քոնն է»... Նույն սկզբունքն է գործում եւ ծնող-զավակ փոխհարաբերությունների դեպքում, որի ներդաշնակ զարգացումը կախված է առաջին հերթին ծնողի գիտակցական վերաբերմունքից. չէ՞ որ զավակը ծնվում է անգիտակից: Ժողովրդական առածն ասում է. «Ինչ ցանես, այն էլ կհնձես», եւ սա շատ ճիշտ է: Ի՞նչ եւ ինչպե՞ս ես տալիս այս անպաշտպան ու անգիտակից էակին. գոնե ենթագիտակցությամբ երեխան անպայման կընկալի ու սրտի խորքում կպահի նստվածքն այն ամենի, ինչ ստացել է: Իսկ ծնողը միշտ պետք է հիշի. «Մարդ ծնեցի Աստծու զորությամբ» (Ծննդ. Դ 1), այսինքն՝ «Ինձ ծնող դառնալու արժանացրեց Աստված, Տերն ինձ շնորհ արեց խնամելու եւ դաստիարակելու այս անմեղ էակին. ինչպիսի՛ պատիվ եւ ինչպիսի՛ պատասխանատվություն»... Երբ իմ անդրանիկ որդին ծնվեց, ու մի քանի օրական զավակիս հայացքն առաջին անգամ խաչվեց իմ հայացքին, մի անբացատրելի հուզմունք ապրեցի հանկած. «Տե՛ր Աստված, այսպիսի տկար մի մարդու, որպիսին ես եմ, հանձնել ես Դու հավերժական մի հոգի՝ խնամելու, գուրգուրելու, մեծացնելու: Ամենակա՛լ Տեր, աղաչում եմ Քեզ, ուժ եւ կարողություն տուր՝ իմաստնորեն գործելու, որպես Քո ծառան, Քո պաշտոնյան՝ Քո ուզած ձեւով այս բալիկին խնամելու եւ հայրական սիրով փայփայելու»... Այնպես որ, ծնող-զավակ փոխհարաբերությանը պետք է պատրաստ լինել երեխայի աշխարհ գալու առաջին իսկ օրերից, ես կասեի՝ անգամ ծնվելուց էլ առաջ:



**- Պողոս առաքյալն իր Ընդհանրական թղթերում հաճախ է անդրադառնում ծնող-զավակ փոխհարաբերություններին. որդիներին պատվիրում է ամեն ինչում հնազանդ լինել ծնողներին, իսկ հայրերին հորդորում է մեծացնել զավակներին Տիրոջ խրատով եւ ուսումով (տե՛ս Եփես. Զ 1-4): Ո՞ր դեպքում է խրատն առավել արդյունավետ:**

- Զավակի մեծանալու հետ, անշուշտ, ծնողը պարտականություն ունի մշտապես խրատելու նրան: Խրատի դերն անուրանալի է բոլոր պարագաներում. խրատում է Քրիստոսն Իր Ավետարանով, խրատում են առաքյալները, Եկեղեցու սբ վարդապետները, վերջապես՝ խրատում են ծնողները զավակներին: Բայց եթե անկեղծ լինենք, մենք՝ հայրերս՝ տկար ու թերի մարդիկ, արդյո՞ք միշտ է, որ ճիշտ խրատներ ու խորհուրդներ ենք տալիս մեր զավակներին: Եվ եթե անգամ ճիշտ խրատներ ենք տալիս, արդյո՞ք միշտ է, որ մեր ապրած կյանքով հաստատում ենք այդ խրատների ճշմարտացիությունը: Ամենամեծ դաստիարակիչ ազդակը ծնողի անձնական օրինակն է. ծնողը կարող է քիչ խոսել, փոխարենն իր ապրած կյանքով հսկայական ազդեցություն ունենալ երեխայի վրա՝ դրական կամ բացասական: Խոսքը, խրատը, զավակին ուղղված հորդորը, ուրեմն, կարող են արդյունավետ լինել եւ երեխայի մտքում ու սրտում պտղավորվել միայն այն դեպքում, եթե չեն հակասում գործին, ինչը տվյալ դեպքում ծնողի ապրած կյանքը եւ դավանած արժեքներն են: Ի՞նչ արժեք կարող է ունենալ արատավոր կյանքով ապրող մի ծնողի խրատը, ով արհամարհելով Աստծո պատվիրանները, միաժամանակ փորձում է առաքինության դասեր տալ իր զավակին:

**- Գաղտնիք չէ, որ ընտանիքի ամրության հիմքը սերն է: Սիրո այդ «չափաբաժինը», ըստ Ձեզ, բավարա՞ր է այսօր մեր ընտանիքներում:**

- Սերը, այդ թվում եւ ծնողական սերը, Արարչի շնորհած անգին գանձն է երկրի վրա: Հիշո՞ւմ եք Պողոս առաքյալի «Սիրո օրհներգը»՝ հավատ, հույս եւ սեր, որոնցից մեծագույնը սերն է համարում առաքյալը: Սերը համբերող է, ամեն բանի դիմացող, ամեն բանի հավատացող, ինչպես ասում է առաքյալը (հմմտ. Ա Կորնթ. ԺԳ 1-13): Ավելացնենք՝ ամեն բան հաղթահարող: Այս ամենը վերաբերում է նաեւ ծնող-զավակի սիրուն:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ

*Սկիզբը՝ էջ 4*

Աշտարակաշինության ժամանակ նրանց հետ էր նաեւ Հայկ նահապետը, որը, հետագայում, չենթարկվելով Բելին, նորից վերադարձավ Հայաստան՝ Նոյ նահապետի մոտ. «Հայկը, որ շինողներից մեկն էր, չկամեցավ այլեւս միաբանվել նրանց հետ, սակայն այլ տեղ չգնաց, այլ ետ դարձավ իր առաջին՝ Արարատյան վայրը, որտեղից ելել էին առաջինները եւ այնտեղ գտավ բնակիչներին, որոնք չէին գնացել Սենաար... որտեղ էլ, ամենայն հավանականությամբ, գտավ նաեւ իր առաջին նախահորը՝ Նոյին» (նույն տեղում, էջ 10), որից էլ նորից վերստացավ իր հայերեն լեզուն, քանզի լեզուների խառնակումը աստվածային պատիժ էր եւ այդ պատժից զերծ էր միայն Նոյ նահապետը եւ նրա սերնդի այն հատվածը, ովքեր մնացին Հայաստանում եւ պահպանեցին ճշմարիտ աստվածպաշտությունը: Խառնակվեցին միայն նրանց լեզուները, ովքեր ներկա էին աշտարակաշինությանը եւ, հետեւաբար, պատժի էին արժանի միայն այդ գործում միաբանվածները. «Քանզի հակառակ է Աստծո արդարությանը պատժել նաեւ անմեղներին, եւ ինչպես բոլորն ընդունում են, Նոյ արդար եւ անմեղ նահապետը զերծ մնաց այդ պատժից, քանզի չէր միաբանվել աշտարակաշինության գործին, նույնը հարկ է ասել նաեւ նրանց մասին, ովքեր մնալով Հայաստանում Նոյի հետ՝ չմիաբանվեցին նրանց հետ եւ ոչ էլ նրանց հետ գնացին, իսկ այնտեղ ասելով ցույց է տալիս, որ Աստված չխառնակեց Արարատյան աշխարհի բնակիչների լեզուն» (նույն տեղում, 10-11), որոնց մոտ վերադարձավ մեր Հայկ նահապետը եւ նրանց հետ կազմեց մի ազգ եւ մի ժողովուրդ: Եվ հարկ էր կա՛մ իր



ժողովրդին սովորեցնել նոր ստացած իր լեզուն, կա՛մ ինքն ուսաներ իր նախնիների լեզուն, որը կորցրեց աշտարակաշինության ժամանակ: Սակայն Հայկ նահապետը գիտակցում էր, որ իր ստացած լեզուն Աստծո կողմից երկնառաք պատուհաս էր եւ նորից պետք է ուսանել իր հայրերի լեզուն, որոնց հանդեպ այնքան սեր էր տածում. «Հայկին անչափ ցանկալի էին իր նախնիները, թե՛ նրանց վիճակը, թե՛ լեզուն եւ թե՛ հավատքը, մանավանդ Նոյի, որ տակավին կենդանի էր եւ ինչո՞ւ ամեն ինչում չնմանվեր նրանց» (նույն տեղում, էջ 12):

Երկրորդ՝ հայոց լեզվի՝ որպես Ադամական լեզվի մասին է վկայում նաեւ այն, որ Արեւելյան Փոքր Ասիան՝ ներառյալ Հայկական լեռնաշխարհը (Վանա լճի մերձակայքը), հանդիսանում է հնդեվրոպական լեզվի նախահայրենիք, ինչի մասին վկայում են մի շարք գիտնականներ, որոնցից են ռուս լեզվաբան Օլեգ Շիրոկովը, լեզվաբաններ Իվանովն ու Գամկրելիձեն:

Հայոց լեզուն առաջին լեզուն լինելու պատճառներից մեկն էլ այն է, որ հայերենն այլ լեզուների նման չէ եւ այլ լեզուներից սերված չէ. «Լեզուների մեծ մասն իրար նման են, եւ շատերն այս կամ այն լեզվից են սերված, որ աղբյուր կամ մայր լեզու են կոչում: Եվրոպական լեզուները մի քանի աղբյուր ունեն, մեկը լատիներենն է, որից սերում են իտալերենը, ֆրանսերենը, իսպաներենը, պորտուգալերենը եւ այլն, մյուսը հունարենն է, որ լատիներենի հետ շատ նմանություններ ունենալով կարող է համարվել նրա մայրը, ուստի այս բոլոր լեզուները հունալատիներեն էլ են կոչվում: Մի գլխավոր աղբյուր էլ սլավոներենն է, որից սերում են ռուսերենը, լեհերենը, բուլղարերենը եւ այլն: Այս աղբյուրն էլ հունարենի հետ որոշ նմանություններ ունի: Առանձին աղբյուր է հանդիսանում գերմաներենը, որից սերվել են անգլերենը եւ նրանցից խառնված լեզուները, բայց սրանց հին աղբյուրն էլ հայտնի է, որ պարսկերենն է: Արեւելյան լեզուներից եբրայերենը, արաբերենը, քաղդիերենը, ասորերենը, եթովպերենը, բոլորը մի աղբյուրից են առաջացել: Հնդկերեն կամ սանսկրիտերեն կոչված հին լեզուն, որ այսօր շատ մայր լեզուների տատ է կոչվում, գրեթե այժմյան բոլոր եվրոպական լեզուների հետ շատ նմանություն ունի, ինչպես նաեւ հին եւ նոր պարսկերենի հետ: ...Արդ, այսքան լեզուների մեջ հայերենի նման լեզու չլինելը հստակորեն ցույց է տալիս, թե այս լեզուն անխառն է մնացել, երբ մյուսները, մեկը մյուսի հետ խառնվելով, ի հայտ եկան եւ ձեւավորվեցին» (Սուրբ Գրոց Հին Ուխտի պատմութեանց ընդարձակ աշխարհաբառը, աշխ. Գրիգոր քահանա Մանդակունւոյ, Թիֆլիս, 1896, էջ 40):

Հայերեն լեզվով էր, որ Աստված խոսեց մեր նախնիների՝ Ադամի եւ Նոյի հետ: Հայոց լեզվով Նոյին հայտնեց իր փրկության ավետիսը: Նոյը տապանից իջնելուց հետո Հայոց հողի վրա զոհասեղան կառուցեց եւ այս լեզվով գոհության հայտնեց Աստծուն՝ իր փրկության համար, հայոց լեզվով էր, որ Աստված ուխտ կնքեց Նոյի հետ եւ մարդկությունն իր առաջին պատվիրանը ստացավ հայոց լեզվով՝ Հայոց հողի վրա:

Հայ ժողովուրդը պատմության ընթացքում բազում դժվարություններ կրեց ու շատ կորուստներ ունեցավ թե՛ նյութական եւ թե՛ հոգեւոր, բայց կարողացավ պահպանել ու սերունդներին փոխանցել ամենապատվական, ամենաարժեքավոր ու մնայուն գանձը՝ դրախտային լեզուն, ինչը զավթիչներից ոչ ոք նրանից չկարողացավ խլել. «Ոչ մի ազգ գոյության իր կամքն ավելի ուժեղ չի արտահայտել երկու հազար տարվա ընթացքում, որքան հայ ազգը: Ոչ մի ազգ ավելի համառությամբ չի պահպանել իր սեփական լեզուն» (Անտուան Մեյեն, Հայաստանի, հայերի եւ հայերենի մասին, Երեւան, 2006, էջ 9):

Շոպենը, հայոց լեզուն համարելով Աստծո կողմից հայրական սիրով հայերին հանձնված սրբազան ժառանգություն, գրում է. «Ամենասուրբ, ամենաանձեռնմխելի ժառանգությամբ, որով խոսում են հայերը, ինչը միայն հայրը կարող է թողնել իր երեխաներին, դա հայրենական լեզուն է: Բոլոր ազգերի մեջ միայն հայերը կարողացան բերել այսքան հազարամյակների ընթացքում Նոյից մինչեւ մեր օրերը եւ ամբողջությամբ պահպանել այդ թանկարժեք գրավականը՝ առավել կարեւոր, ինչը նախաջրհեղեղյան համընդհանուր լեզուն է (Шопен, Исторический памятникь, С.-Петербургь, 1852, ст. 117):

***Գայանե ԹԵՐՅԱՆ***

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅՈՒՄ


Հայկական եկեղեցի Սամարղանդում

Հայերը Միջին Ասիայում հաստատվել են դեռեւս Ք. ա. 6-րդ դարից: Վաղ շրջանում հայ-միջինասիական հարաբերությունները ամբողջությամբ մասն են կազմել հայ-իրանական հարաբերությունների, եւ դրանք չի կարելի դիտարկել որպես առանձին եւ ինքնուրույն փոխհարաբերություններ:

Հայ-միջինասիական առնչությունները շարունակվել են նաեւ Սասանյանների (226-652 թթ.) օրոք. 4-6-րդ դդ. մեծ թվով հայեր են տեղափոխվել Միջին Ասիա: 6-րդ դ. Սասանյանները Միջին Ասիայում հիմնել են հայկական եւ վրացական ռազմականացված բնակավայրեր՝ այստեղ իրենց տիրապետությունը ամրապնդելու համար:

7-րդ դ. հայ պատմիչ Սեբեոսի վկայության համաձայն՝ 599 թ. հայ զորավար Սմբատ Բագրատունին նշանակվել է Միջին Ասիայում պարսկական զորքերի ընդհանուր հրամանատար, իսկ 600 թ.՝ մարզպան: Մարզպանի պաշտոնում նա


Հայկական եկեղեցի Թուրքմենբաշիում

մնացել է մինչեւ 608 թ.՝ այդ ընթացքում կառուցելով հայաբնակ քաղաք՝ իր ենթակառուցվածքներով:

Հայ-միջինասիական հարաբերությունների նոր փուլ է սկսվում այն ժամանակ, երբ Մերձավոր Արեւելքի եւ, մասնավորապես՝ Հայաստանի ճանապարհին են բռնում Միջին Ասիայի քոչվորական ցեղերը: Նրանց առաջնորդներից, օրինակ, Լենկթեմուրը հազարավոր հայերի է բռնագաղթեցրել դեպի Միջին Ասիա:

Հայերի՝ Միջին Ասիայում հիմնավորվելու նոր փուլն սկսվեց 19-րդ դ. երկրորդ կեսին՝ ռուսական նվաճողական քաղաքականության ժամանակ: Ռուսական ցարական կառավարությունը խրախուսել է հայերի գաղթը Միջին Ասիա (հատկապես՝ Թուրքմենստան)՝ հաշվի առնելով նրանց աշխատանքային ջիղը, քրիստոնյա լինելը, արեւելյան ժողովուրդների բարքերին ու լեզվին (պարսկերեն, թուրքերեն) տիրապետելու փաստը: Ռուսերենին եւ արեւելյան լեզուներին տիրապետող քրիստոնյա հայերը, այդպիսով, ընդունելի տարր էին ցարական իշխանությունների համար:

Հայերն ամենուրեք մասնակցում էին երկաթուղիների, կամուրջների եւ այլ կառույցների շինարարությանը: 19-րդ դ. վերջին հայերը վերածվում են տարածաշրջանի առաջատար տարրերից մեկը՝ տիրելով հսկայական առեւտրական կապիտալի:

20-րդ դ. երրորդ եւ չորրորդ տասնամյակներում, կապված խորհրդային ղեկավարության ինդուստրացման քաղաքականության հետ, հայերի նոր զանգվածներ սկսեցին տեղափոխվել Միջին Ասիա: 1937-1949 թթ. մեծ թվով հայեր աքսորվեցին Միջին Ասիա, հատկապես՝ Ղազախստան:

1946-1991 թթ. միջինասիական հանրապետություններում հայերի նկատմամբ ասիմիլացման քաղաքականության գործադրման փորձ է կատարվել, ինչը, ընդհանուր առմամբ, ձախողվել է:

1990-ական թթ. միջինասիական հանրապետություններում ազգայնական տրամադրությունների հասունացման եւ տնտեսական դժվարությունների հետեւանքով մեծ թվով հայեր լքեցին միջինասիական տարածաշրջանը: Այնուհանդերձ հենց նույն 1990-ական թթ. եւ նաեւ 2000-ական թթ. մեծ թվով հայեր (հատկապես՝ Հայաստանի Հանրապետությունից եւ ԱՊՀ անդամ այլ երկրներից) հաստատվել են Միջին Ասիայում, հատկապես՝ Ուզբեկստանում:

Խորհրդային իշխանության տարիներին եւ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո մեծ թվով հայեր զբաղեցրել են միջինասիական հանրապետությունների ղեկավար պաշտոններ (Ղրղզստանում 2 հայ նախարար է եղել, 1936-38 թթ. Ղազախստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարը ազգությամբ հայ է եղել եւն), աչքի են ընկել գիտության եւ տնտեսության ասպարեզներում:

Սույն աշխատանքով ցանկանում ենք մանրամասնորեն նկարագրել միջինասիական յուրաքանչյուր պետության հայ համայնքի պատմությունը եւ ներկայիս տեղաբաշխումը յուրաքանչյուր պետության ներսում:

ա) Թուրքմենստան: Թուրքմենստանի հայ համայնքը հնագույնն է Միջին Ասիայում: Նրա պատմությունը գալիս է Աքեմենյան Պարսկաստանի ժամանակներից:

Սակայն որպես մշտական համայնք սկսել է ձեւավորվել միայն 19-րդ դ. երկրորդ կեսին: Այդ ժամանակ հայերը կարեւոր դեր են սկսում խաղալ Թուրքմենստանի տնտեսության եւ մշակութային կյանքում:

19-րդ դ. վերջին (1897 թ.) անցկացված մարդահամարի տվյալներով՝ Թուրքմենստանում մոտ 4,2 հազար հայ էր ապրում: 1920-ական թթ. հայերի թիվն արդեն 12 հազար էր (Աշխաբադ՝ 7 հազար, Մերվ (այժմ՝ Մառի)՝ ավելի քան 2 հազար, մնացածը՝ Կրասնովոդսկ (այժմ՝ Թուրքմենբաշի), Չարջոու, Բայրամ-Ալի եւն):

1880-1920-ական թթ. Թուրքմենստանի հայ համայնքը բավականին ծաղկուն շրջան է ապրել. աշխույժ է եղել համայնքի հասարակական եւ գիտամշակութային կյանքը, գործել են 3 հայկական դպրոցներ (Աշխաբադում, Մերվում եւ Կրասնովոդսկում):

Թուրքմենստանում հայկական առաջին եկեղեցին բացվել է Աշխաբադում (1887 թ.), երկրորդը՝ Մերվում (1890 թ.): Այնուհետեւ հայկական եկեղեցիներ են բացվել Ղզըլ Արվադում, Կրասնովոդսկում եւ Թեջենում: Արդյունքում՝ 1910 թ. Թուրքմենստանի 5 քաղաքներում կային գործող հայկական եկեղեցիներ:

Մինչեւ 1892 թ. Թուրքմենստանի եւ Միջին Ասիայի բոլոր տարածքների հայկական եկեղեցիները պատկանել են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Շամախու թեմին, իսկ 1892 թվականից՝ Աստրախանի թեմին: 1920-22 թթ. Թուրքմենստանի հայկական եկեղեցիները հանձնվել են Բաքվի եւ Թուրքեստանի թեմին:

Թուրքմենստանի հայ հոգեւորականությունը մեծ դեր է խաղացել համայնքի կյանքում: Նրա միջոցներով 1918 թ. կազմավորվել են կամավորական ջոկատներ եւ ուղարկվել Հայաստան՝ երկիրը թուրքական ներխուժումից պաշտպանելու համար: Այնուհետեւ Թուրքմենստանի հայ հոգեւորականությունն օգնություն է կազմակերպել արեւմտահայ գաղթականների համար:

1930-ական թթ. սկզբներին Թուրքմենստանում հաստատվել են խորհրդային կարգեր, ինչից հետո քանդվել է հայկական եկեղեցիների մեծ մասը, մյուս մասը փակվել կամ վերափոխվել են տնտեսական շինությունների:

Խորհրդային իշխանության տարիներին Թուրքմենստանի տարածքում նկատվել է հայերին ձուլելու (ռուսացնելու) միտում, քանի որ տարեցտարի ավելի մեծ թվով հայեր սկսել են իրենց մայրենի լեզուն համարել ռուսերենը:

Այդուհանդերձ, Թուրքմենստանում բնակվող հայերի թիվը խորհրդային տարիներին շարունակաբար աճել է: Եթե 1970 թ. Թուրքմենստանում ապրում էր 23,1 հազար հայ, ապա 1988 թ. հայերի թիվն արդեն անցնում էր 50 հազարից:

1988-1990 թթ. Թուրքմենստանում հասունացել են հակահայկական տրամադրություններ՝ կապված Արցախյան շարժման սխալ լուսաբանման հետ: Սկսվել են խլրտումներ՝ հարձակումներ հայերի վրա, եւ արդյունքում մեծ թվով հայեր լքել են երկիրը՝ հաստատվելով Ռուսաստանի Դաշնությունում, Հայաստանի Հանրապետությունում եւ, մասամբ՝ Ուկրաինայում:

Արդեն 1994 թ. հայերի թիվն իջել էր մինչեւ 35 հազարի: 1995 թ. մարդահամարի արդյունքները հերթական անգամ փաստեցին, որ հայերի քանակը Թուրքմենստանում շարունակում է նվազել: Ըստ այդ արդյունքների՝ Թուրքմենստանում ապրում էր 33,6 հազար հայ, որից հայախոս էր մոտ 3/4 մասը, իսկ մնացածը ռուսախոս էր:

2003 թ. Թուրքմենստանում բնակվում էր մոտ 22 հազար հայ (Թուրքմենստանի բնակչության շուրջ 0,45 %-ը): Հայ համայնքի մեծ մասը կենտրոնացած էր Աշխաբադում, իսկ մնացած մասը՝ Մառի, Թուրքմենբաշի եւ Չարջոու քաղաքներում:

Ներկայումս (2009 թ.) Թուրքմենստանում շուրջ 20 հազար հայ է բնակվում: 2003 թ. համեմատությամբ՝ համայնքի ներքին տեղաբաշխվածությունը գրեթե անփոփոխ է մնացել: Աշխաբադում եւ Թուրքմենբաշիում գործում են հայկական կիրակնօրյա դպրոցներ: Թուրքմենբաշիում կա պահպանված հայկական եկեղեցի:

*Շարունակելի*

***Միքայել ՄԱԼԽԱՍՅԱՆ***

# ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 13-18-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

## (ընդհանուր ակնարկ)

*Սկիզբը՝ էջ 4*

Կորած է համարվում նաեւ նրա *«Թաթարների պատմութիւն»* աշխատությունը: Վանական վարդապետի ուսուցչական առաքելության մասին խոսք կա նաեւ Գանձակեցու պատմության ԺԶ գլխում: Իսկ թաթարական գերության մեջ նրա կյանքի մասին պատմում է ԻԴ գլխում, որ վերնագրված է *«Վանական վարդապետի ու նրա հետ եղածների գերության մասին»*: Վանական վարդապետին հանդիպում ենք նաեւ ԽԸ, ԾԲ (*«Վանական վարդապետի դավանության խրատը»*), ԾԳ (*«Սուրբ վարդապետ Վանականի վախճանի մասին»*) գլուխներում:

Վանական վարդապետի գործը շարունակել է նրա աշակերտ եւ եղբորորդի **Մարգարեն:** Վանական վարդապետի աշակերտներից էին նաեւ **Վարդան Արեւելցին** (1200/1210-1269/1271), **Մաղաքիա աբեղան** (մոտավորապես 13-րդ դարի 10-70-ական թթ.):

**Վարդան Արեւելցին** եղել է Երուսաղեմում, Կիլիկիայում, ուր հանդիպել է Հեթում արքային եւ Կոստանդին վեհափառին: Ամբողջ կյանքում շրջել է տարբեր վանքերում, գրել է եւ ուսուցանել: Նրա աշակերտներից է Հովհաննես Երզնկացին: Վարդան Արեւելցին 1264-ին հանդիպել է թաթարների Հալավու ղանին եւ մանրամասն նկարագրել նրա հետ ունեցած զրույցը:

Վարդան Արեւելցին թողել է հարուստ ժառանգություն՝ հիմնականում հոգեւոր բովանդակության, այդ թվում՝ ներբողներ, մեկնություններ, թարգմանություններ: Հայտնի են նրա *«Թուղթ <...> առ Հեթում թագաւորն»* եւ *«Յաղագս մեկնութեան քերականին»* գործերը: Սակայն Վարդան Արեւելցին առավել հայտնի է իր *«Պատմութիւն տիեզերական»* (Մոսկվա, 1861, Վենետիկ, 1862) աշխատությամբ, որի սկիզբը նախահայր Ադամն է, ընթացքը՝ նրանից սկսվող տարբեր ազգերի պատմությունը, իսկ վերջը՝ իր ժամանակակից թաթարներն են: Օգտվել է թե՛ նախկին մատենագիրներից եւ թե՛ իր ժամանակակիցներից (Գանձակեցի, Վանական վարդապետ): Պատմությունն ավարտվում է 1267 թվականով, որ Կոստանդին վեհափառի մահվան տարին է:

Թաթարների պատմությանն է նվիրված **Մաղաքիա աբեղայի** *«Պատմութիւն վասն ազգին նետողաց»* (Ս. Պետերբուրգ, 1870) աշխատությունը, որի շարադրանքը հասնում է մինչեւ 1270-ականների սկիզբը:

**Մխիթար Այրիվանեցին** (1230/1235-1291) միջնադարի նշանավոր հոգեւոր գործիչներից է՝ մանկավարժ եւ գրական բազմապիսի երկերի հեղինակ: Նրա հեղինակությունը տարածվել է արդեն իսկ իր կյանքի տարիներին: Նրա ստեղծագործությամբ ոգեւորվել է Գրիգոր Խլաթեցին: Նրա անունը բազմիցս հանդիպում է հիշատակարաններում:


Սարգիս Պիծակի մանրանկարներից

Նոր ժամանակներում Այրիվանեցու ժառանգությամբ զբաղվել են նշանավոր հայագետներ Մ. Մսերյանցը, Մ. Էմինը, Մ. Բրոսսեն, Ք. Պատկանյանը, Ա. Տեւկանցը, Ղ. Ալիշանը, Գ. Զարբհանալյանը, Գ. Գալեմքյարյանը, Կ. Տեր-Մկրտչյանը, Ն. Ակինյանը, Գ. Հովսեփյանը եւ ուրիշներ: Տպագրվել են նրա երկերը (**Մխիթար Այրիվանեցւոյ պատմութիւն Հայոց,** հրատ. Մ. Էմին, Մոսկվա, 1860: **Մխիթար Այրիվանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական,** Ս. Պետերբուրգ, 1867): Աշխատասիրությամբ Ք. Պատկանյանի: **Մխիթար Այրիվանեցի,** Գանձեր եւ տաղեր, Ե., «Նաիրի», 2005: Աշխատասիրությամբ Է. Հարությունյանի: Նրա մասին ստեղծվել է ամփոփ մենագրություն (տես **Է. Հարությունյան,** Մխիթար Այրիվանեցի, Ե., ԳԱ հրատարակչության, 1985):

*Շարունակելի*

***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***

***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# «ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ»

*Սկիզբը՝ էջ 6*

Հիշենք դրա ամենապայծառ դրսեւորումը՝ «Անառակ որդու առակը» Ավետարանից: Անառակ որդու անկեղծ զղջման հիմքում հոր նկատմամբ անսահման սերն էր, եւ այդ զղջումը, որ տուն վերադարձրեց նրան, ողողված էր սիրո արդյունքներով: Մյուս կողմում հայրական սիրո հրաշքն է՝ գրկաբաց, ամեն ինչ ներող, ամեն բանի համբերող... Չկա ընտանիք, որտեղ ծնողի եւ զավակի փոխհարաբերությունը բացարձակորեն հարթ լինի: Լինում են տարաձայնություններ, անհամաձայնություններ, նույնիսկ վեճ ու կռիվ, ու եթե դրանք չեն վերածում թշնամության, ապա միայն ու միայն ամենակարող սիրո շնորհիվ: Չեմ կարող ասել, թե բավարա՞ր է արդյոք սիրո «չափաբաժինը» մեր ընտանիքներում: Գիտեմ միայն, որ սերը չի կարող լինել բավարար եւ անգամ՝ շատ, որովհետեւ սերն անչափելի է, ինչպես որ դրա Պարգեւողը: Իսկ ընդհանրապես ծնող-զավակ փոխհարաբերության բարելավման կարգավորիչը, լավագույն բուժամիջոցը հավատքն է: Ինչո՞ւ եմ ես անընդհատ շեշտում հավատքի եւ Աստծու դերակատարությունը մեր կյանքում: Որովհետեւ քիչ չեն այն ծնողները, որոնք ասում են. «Այսպես պիտի լինի եւ վերջ»: Հետո պարզվում է, որ ծնող լինելով եւ իր զավակի լավը ցանկանալով հանդերձ՝ նա սխալվում էր: Բազմաթիվ հայրերի եմ ճանաչում, ովքեր անկեղծ սրտով ցանկացել են իրենց զավակներին Աստծուց հեռու պահել: Շեշտում եմ՝ անկեղծ սրտով... Կարող ենք ասել. «Հասկանալի է՝ անաստվածության տասնամյակներ, աստվածմերժության միջավայրում ստացած դաստիարակություն» եւ այլն: Բայց չէ՞ որ դրա պտուղներն ենք դեռ ճաշակում այսօր. Աստծուց հեռացնելով՝ ո՞ւր ես տանում զավակիդ...

**- Այն, ինչի մասին մենք հիմա խոսում ենք, առավելաբար վերաբերում է հայ ընտանիքին, հայկական միջավայրին, ընտանիքի ու ծնող-զավակ հարաբերությունների մեր ընկալումներին, ինչը մեծապես պայմանավորված է ազգային ավանդական մտածողությամբ ու հոգեբանությամբ: Այսօր, սակայն, ուզենք թե չուզենք, բախվում ենք այս ամենի վերաբերյալ բոլորովին այլ մոտեցումների, երբեմն՝ տրամագծորեն հակառակ, այն, ինչն անվանում ենք եվրոպական կամ ամերիկյան արժեքներ, արեւմտյան նվաճումներ, ձեռքբերումներ, ինչպես կուզեք: Բաներ, որոնք եթե չասենք հակասում, ապա գոնե ոչ մի ընդհանուր եզր չունեն ընտանիքի եւ ընտանեկան հարաբերությունների մեր արժեհամակարգի հետ: Հայաստանում այսօր գործող զանազան կազմակերպություններ կան, որոնք, օրինակ, կոչված են իբրեւ թե պաշտպանելու հայ կնոջն իր ամուսնու բռնություններից կամ, ասենք, պաշտպանում են երեխաների իրավունքները... սեփական ծնողներից: Երեխաներին հիշեցնելով իրենց իրավունքները՝ սովորեցնում են, որ վերջիններս կարող են դատի տալ իրենց իրավունքները ոտնահարող ծնողներին կամ զանգահարել ոստիկանություն եւ ասել, որ հայրը կամ մայրը բռնանում է իր դեմ եւ այլն: Ի՞նչ եք կարծում՝ այս ինստիտուտը կարո՞ղ է մեր իրականության մեջ «կյանք ունենալ»:**



- Արեւմուտքը ե՞րբ սկսեց առավել ծրաջանորեն ու բացահայտ կերպով իր ձեռքբերումները մեզ մատուցել: Երբ որ «մեր կողմի» գաղափարախոսությունը պարտություն կրեց: Բայց այդ գաղափարախոսությունը, խոստովանենք, մերը չէր. հայը ե՞րբ է եղել անաստված... Տասնամյակներ շարունակ կտրված լինելով մեր հայրավանդ ահռելի ժառանգությունից, զրկված լինելով նաեւ բանավոր ավանդությունից, քանի որ դրա կրողները հիմնականում հոգեւորականներն էին, որոնք գնդակահարվեցին կամ աքսորվեցին, մեր ծնողներն ու պապերը ի՞նչ պիտի փոխանցեին մեզ: Մարդիկ վախենում էին տանն Աստվածաշունչ կամ որեւէ հոգեւոր գիրք ունենալուց, վախենում էին Աստծու անունը տալուց: Ինչ էլ որ անում էին՝ թաքուն, զգուշանալով: Նման մթնոլորտում, հասկանալի է, ծնողը չէր կարող զավակի սրտում աստվածպաշտության ծիլեր սերմանել, որքան էլ ցանկանար: Եվ ահա «երկաթե վարագույրի» պատռվելով ու սահմանների բացվելով՝ արեւմտյան արժեքները հորդահոս լցվեցին մեր երկիրը, մեր քաղաքներն ու գյուղերը, մեր օջախները... եւ լավի ու առաջադիմականի հետ բազմաթիվ անպետքություններ ներխուժեցին մեր կյանք ու կենցաղ: Ուզում են հայ ծնողներին կրթել, մեր ընտանիքները «պլանավորել», ի՞նչ ասես, որ չեն ուզում... Շնորհակալ ենք: Դրա համար մենք, փա՛ռք Աստծո, ունենք հնամյա Եկեղեցի, դարավոր ավանդույթներ, մշակույթ, ազգային ինստիտուտներ: Ձեր կարիքը, կարծես թե, առանձնապես չունենք: Թող ձե՛ր երեխաները դատի տան իրենց ծնողներին, իսկ մեզ լիովին բավարարում են ընտանեկան խնդիրները կարգավորելու մեր ավանդական եղանակները՝ գուցե ոչ այնքան «ժողովրդավարական» ու «առաջադիմական», որքան ձերն են, բայց հաստատապե՛ս առավել աստվածահաճո...

Էլ չեմ ասում, որ վերջին ժամանակներում մեզանում էլ սկսել են ավելի շատ խոսել, ասենք, միասեռականների իրավունքների մասին: Ի՞նչ իրավունքի մասին է խոսքը. ավելի ճիշտ պիտի լիներ ասել, որ գործ ունենք հայ քրիստոնյայի իրավունքների ոտնահարման հետ: Բայց արի ու տես՝ Արեւմուտքն այլ բան է փորձում պարտադրել: Ո՛չ, նոր Սոդոմ-Գոմոր չի կարող լինել: Այս ամենից կարող ենք ձերբազատվել միայն ու միայն Առաքելական Սուրբ Եկեղեցու զորությամբ, ճշմարիտ հավատքով՝ մեր ժողովրդի, մեր սուրբ հայրերի դարավոր իմաստությանն ապավինելով: Երբ ապագայի հայրերը կկրթվեն Ավետարանով, բազում ճշմարտությունների հետ նաեւ կհասկանան, որ իրենք «մարդ են ծնել Աստծու զորությամբ», եւ նրան, ում ծնել են, կքայլեցնեն դեպի Աստված, դեպի աղբյուրը Լույսի:

**- Տե՛ր հայր, դուք կուզենայի՞ք, որ Ձեր որդին ընտրեր քահանայության ճանապարհը:**

- Ես պիտի ուզենայի, որ ինչպիսին էլ լինի որդուս ճանապարհը, լինի Տիրոջ կամքով: Իսկ եթե Աստված իրեն քահանայության արժանացներ, մեծագույն պատիվ ու բախտավորություն պիտի լիներ ինձ համար:

*Հյուրընկալեց*
***Հայկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ***

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԼԵՎՈՆ ՇԱՆԹԻ «ԻՆԿԱԾ ԲԵՐԴԻ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ» ԵՎ «ՕՇԻՆ ՊԱՅԼ» ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

*Սկիզբը՝ էջ 5*



Հանուն հայոց պետականության ամրապնդման Օշինը վարում է խելամիտ ու նպատակասլաց թե՛ ներքին եւ թե՛ արտաքին քաղաքականություն: Պալատը հայացնելը, օտար հովերի ու հրահանգների ենթակա, ոչ հայկական մտածողության ու հոգեբանության տեր կամակատար պալատականներից ազատվելը նա իր առաջին գործն է համարում: Ուստի բնական է, որ Օշին պայլը պիտի ջանար պալատից հեռացնել բացահայտ կամ թաքուն լատինամոլներին եւ հայոց պատանի արքային տալ ազգային ե՛ւ մտահոգեւոր, ե՛ւ ռազմահայրենասիրական դաստիարակություն, որ նա ապագայում կարողանա ամրապնդել ազգային պետականությունը: Հենց այդ նպատակով Օշինն իր հետ պալատ է տանում կոմիտասյան հակումների տեր Մխիթար վարդապետին, որ պալատը «հայ շունչով թաթախվի. մեր պատանի թագավորը այդ շունչին տակ պետք է որ մեծնա» եւ ոչ թե շարունակ ունկնդրի պալատական կանանց բամբասանքներն ու օտարամոլ ունիթորների շաղփաղփանքները; Ահա ինչու՝ ճիշտ ու ճիշտ իր նման պալատը չսիրող, սիրելի զբաղմունքից հրաժարվել չկամեցող Մխիթար հայր սուրբին Օշինն ինքն է համոզում ու հորդորում.

«ՕՇԻՆ - (Հանկարծ զայրույթով ոտքի կցատկե) ... Լծկանին ո՞վ կհարցնե իր սիրածը կամ չսիրածը: Պատմությունը իր արտերը կվարե, եւ մենք անոր եզներն ենք. հասարակ եզներ, որան լծեր է իր գութանին ու կվարե: Կախե՛ գլուխդ ու քաշե՛ լուծը: Եվ քալե՛ որ կողմը որ կվարե վարողիդ ճիպոտը: Եվ քալես պիտի մինչեւ արտին վերջը կամ մինչեւ իյնաս ու սատկիս. կես ճամփան կենալ չկա, հասկցա՞ր, ճամփու կեսին կենալ չկա, պիտի երթաս ուր որ քշե քեզի պետության ճիպոտը» (նույն տեղում, էջ 714):

Հենց ա՛յս էր հայ պետականության պահպանման միջոցը, այս էր նաեւ ազգային պետության շահերի գիտակցությունը, որով նա հակադրվում էր նորագույն ժամանակի բոլշեւիկյան գործիչներին: Ժողովրդի եւ պետականության հանդեպ պարտքի բարձր գիտակցությունն է Օշինին մղում իր համար ճակատագրական զոհաբերությունների. բացի նրանից, որ Օշինն ինքը հրաժարվում է Ռիտայի հետ երջանկանալուց եւ հարկադիր ամուսնանում է այրի թագուհու՝ Հովհաննայի հետ, իր դստերը՝ մանկահասակ Ալիսին էլ ամուսնացնում է պատանի արքա Լեւոնի հետ՝ դա համարելով արքունիքի հեղինակության բարձրացման ու ամրապնդման կարեւոր միջոցներից մեկը:

Ռիտայի մեջ մեծ սերը արդեն պայլ դարձած ու իրեն թեկուզեւ քաղաքական հանգամանքների թելադրանքով լքած Օշինի հանդեպ փոխարկվում է այնպիսի բուռն ատելության, որ ամենուր նա հռչակվում է որպես «Դքսուհի Ատելություն»: Նա գիտակցաբար անցնում է հայոց գահին հավակնող եւ Օշինին թշնամի Ամորիների կողմը եւ ամուսնանում Ժուան Ամորու հետ ու հայտարարում, թե Օշինի դատաստանն ինքը իր ձեռքով պիտի տեսնի: Քաղաքական այդ խարդավանքներում բզկտվում են մարդկային հոգիները, զոհաբերվում է մարդկային երջանկությունը, եւ սա Օշինի ընդամենը հերթական զոհաբերությունն է:

*Շարունակելի*

***Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**

**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**

**Էլ.փոստ՝**
**qh@etchmiadzin.am**

Ստոր. տպագր.
18. 08. 2009 թ.

**Տպաքանակը՝ 2100**

**Գինը՝ 50 դրամ**